ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ԿԻԼԻԿԻԱՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (1914-1918 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր

ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

պատմական գիտությունների դոկտոր
ՊՈՂՈՍՅԱՆ Վ. Ա.

պատմական գիտությունների դոկտոր
ՄԱԽՄՈՒՐՅԱՆ Գ. Գ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. սեպտեմբերի 27-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. օգոստոսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՄՈՒՐԱԴՅԱՆ Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Առաջին աշխարհամարտի տարիներին Միջերկրականի հյուսիսարևելյան ափին գտնվող Կիլիկիան հայտնվել էր հայ քաղաքական շրջանակների և Անտանտի երկրների հետաքրքրությունների ոլորտում: Տեղի ունեցած բանակցությունների, նախաձեռնությունների ու համաձայնագրերի լուսաբանումն արդիական է մերձավորարևելյան ներկա գործընթացների համապատկերում: Հիմնահարցի ուսումնասիրությունը չափազանց կարևոր է, քանի որ թույլ է տալիս հասկանալ մեծ տերությունների խոստումների, համաձայնագրերի, դաշնակիցների նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարման պատրաստակամությունը: Թեման հնարավորություն է տալիս հասկանալու տերությունների միջև, ինչպես նաև նրանց ներսում տարբեր գերատեսչությունների ու գործիչների շահերի բախումը: Նյութն առնչվում է նաև Հայոց մեծ եղեռնին՝ այն կանխելու հնարավորությանը: 21-րդ դարում ականատես ենք լինում Սիրիայում, Իրաքում էթնիկ ու կրոնական տարբեր փոքր խմբերի նկատմամբ կիրառվող ցեղասպանական գործողություններին և դրանց նկատմամբ «քաղաքակիրթ» աշխարհի արձագանքին: Նախորդող հարյուրամյակի ընթացքում տեղ գտած ողբերգությունները բավարար չափով չսթափեցրին մարդկությանը, որպեսզի ստեղծվեն նման զանգվածային հանցագործությունները կանխելու ավելի հստակ մեխանիզմներ: Հետևաբար՝ հիմնահարցի ուսումնասիրությունը կարող է կանխատեսելի դարձնել մեր տարածաշրջանում տերությունների քաղաքականությունը, և այն հնարավորություն է տալիս փորձելու գտնել նոր լուծումներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել և լուսաբանել 1914-1918 թթ. Կիլիկիայի շուրջ ծավալված ռազմաքաղաքական իրավիճակն ու դիվանագիտական պայքարը: Կիլիկիան Անտանտի աջակցությամբ և հայկական զինուժով ազատագրելու ուղղությամբ կատարված բանակցությունները, նախաձեռնությունները, նախագծերն ու ծրագրերը, հայկական այդ երկրամասին տիրելու նպատակով ծավալված դիվանագիտական պայքարը գրեթե ամբողջությամբ դուրս են մնացել պատմագիտական ուսումնասիրությունների շրջանակից: Մենք փորձել ենք լուծել այդ խնդիրը, բացահայտել, վերլուծել ու ներկայացնել այդ իրադարձությունների հետ կապված գործընթացները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ատենախոսության ժամանակագրական շրջանակը 1914-1918 թթ. են: Դա պայմանավորված է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցող ռազմաքաղաքական գործընթացներով: Այս ժամանակաշրջանն ընտրվել է, քանի որ Կիլիկիան

թուրքերից գրավելու, նրա ապագան որոշելու շուրջ նախագծերը, ծրագրերը, նախաձեռնությունները նոր ջրբաժան են հանդիսանում: Մեծ տերությունները պատերազմից առաջ այդ խնդիրը չէին քննարկել, իսկ պատերազմի ավարտից հետո նոր գործընթացներ են սկսվում: Հետևաբար՝ աշխարհամարտի տարի-ներին Կիլիկիային առնչվող իրողություններն իրենց բնույթով խորապես փոխկապակցված են, մեկ ամբողջություն են կազմում, և բնականաբար անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել միասնական թեմայի շրջանակում՝ որպես շաղկապված պատմական զարգացումների հարաբերականորեն ինքնուրույն ընդհանրություն:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած է պատմահամեմատական մեթոդը և պատմականության սկզբունքը: Ատենախոսության շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է թեմատիկ և ժամանակագրական սկզբունքներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

1. Առաջին անգամ ներկայացվել է Կիլիկիան Անտանտի երկրների կամ հայկական զինուժով ազատագրելու ուղղությամբ կատարված բանակցություններն ու նախագծերը, դրանց հետ կապված խնդիրները և նպատակները պատերազմի տարբեր փուլերում: Ատենախոսության մեջ բացահայտվել են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի ռազմական ու պետական գործիչների՝ Կիլիկիան բրիտանական, ֆրանսիական, հայկական, ճապոնական զորքերով ազատագրելուն ուղղված առաջարկները, դրանց քննարկումներն այդ երկրների քաղաքական ու ռազմական իշխանությունների կողմից: Վերլուծության են ենթարկվել այդ ծրագրերի գործադրման հնարավորությունները և հետևանքները:

2. Լուսաբանվել են պատերազմի տարբեր փուլերում հայկական շրջանակների և Անտանտի երկրների հետաքրքրությունները Կիլիկիայի նկատմամբ, նրանց միջև տեղի ունեցող դիվանագիտական պայքարն ու բանակցությունները: Ներկայացվել են մեծ տերությունների տարբեր գործիչների ու գերատեսչությունների տեսակետներն ու հակասությունները Կիլիկիայի ապագայի հարցում:

3. Պատմագիտության մեջ մեծ ուշադրություն է դարձվել մուսալեռցիների հերոսամարտին, սակայն հայրենի հողն ազատագրելու ուղղությամբ նրանց հետագա քայլերն ու նախաձեռնությունները մնացել են գրեթե անհայտ: Առաջին անգամ գիտականորեն լուսաբանվել ու վերլուծության է ենթարկվել նրանց կողմից արված առաջարկները, ռազմական մարզումները, ֆրանս-բրիտանական ծրագրերը՝ կապված մուսալեռցիների հետ:

4. Կիպրոսում հայկական կամավորական զորամաս կազմավորելու խնդիրը, որը քննարկվել է 1914 թ. վերջերից և

1916 թ. երկրորդ կեսին, ի վերջո հանգեցրեց Հայկական լեգեոնի կազմավորմանը, նույնպես նախկինում գրեթե չի լուսաբանվել:

5. Հայկական լեգեոն կազմավորելու նախաձեռնության, դրա շուրջ բանակցությունների և համաձայնության կայացման մասին պատմագիտության մեջ շրջանառվել են տարբեր տեսակետներ, սակայն դրանք կարծում ենք՝ թերի են կամ սխալ: Ներկայացված է այդ գործընթացի ամբողջական պատկերը, ուղղումներ են մտցված նախկինում ընդունված տեսակետների վերաբերյալ:

6. Առաջին անգամ գիտականորեն ներկայացված են լեգեոնի կամավորագրության գործընթացի հետ կապված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված ջանքերը: Պատմագիտության մեջ առաջ է քաշվել սխալ տեսակետ, որ իբր ամերիկահայ՝ ավելի մեծ թվով կամավորների միացումը լեգեոնին խոչընդոտվել է ֆրանսիական իշխանությունների կողմից: Լուսաբանված են այդ խնդրի հետկապված բոլոր մանրամասնությունները:

7. Հայ պատմագիտության մեջ Արարայի ճակատամարտի մասին շատ է գրվել, սակայն չի ներկայացվել, որ դա 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեգիդոյի կամ Արմագեդոնի ճակատամարտի դրվագներից մեկն էր միայն: Քանի որ Պաղեստինյան ռազմաճակատի գործողությունները և Հայկական լեգեոնի պատմությունը գիտական լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել հայ պատմագիտության կողմից, դա է պատճառ դարձել, որ այդ իրադարձություններից մեկ դար անց, հայ իրականության մեջ դեռևս Մեգիդոյի ճակատամարտը և դրանում Հայկական լեգեոնի իրական դերը չի լուսաբանվել: Հայագիտության մեջ առաջին անգամ մանրամասն ներկայացված է Պաղեստինյան ռազմաճակատի այդ խոշորամասշտաբ գործողությունը, որի արդյունքում թուրքական ռազմաճակատը փլուզվեց: Լուսաբանված են հայկական զորամասի իրական դերակատարումը, նրագրաված դիրքը:

8. Ուսումնասիրված և ճշգրտված է Մեգիդոյի ճակատամարտից մինչև Կիլիկիա Հայկական լեգեոնի ուղին: Այս հարցի շուրջ նույնպես հայ պատմագիտության մեջ սխալ տեսակետներ են առաջ քաշվել, որ իբր լեգեոնը մասնակցել է Դամասկոսի և Հալեպի գրավմանը: Իրականում լեգեոնը ծովափի երկայնքով է առաջ շարժվել մինչև Բեյրութ, իսկ այնտեղից նավերով տեղափոխվել է Կիլիկիա:

9. Հատուկ ուշադրություն է դարձվել լեգեոնի կողմից Կիլիկիայի ազատագրմանը, ինչպես նաև հայ գաղթականներին աջակցելու, մահմեդականների մոտ գտնվող հայ կանանց ու երեխաներին ազատելու լեգեոնականների գործողություններին: Ներկայացված է տարագիր երիտասարդների ձգտումը՝ միանալու հայկական զորամասին՝ հայրենիքն ազատագրելու նպատակով:

Ատենախոսությունն ունի նաև գործնական և կիրառական նշանակություն: Նրա դրույթները, վերլուծությունների

արդյունքում առաջ քաշված եզրահանգումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել դպրոցում և բուհում դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ շարադրելիս: Կարող է օգտակար լինել դիվանագետների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները հրատարակվել են հոդվածների տեսքով, թեմայի վերաբերյալ զեկուցումներ են ներկայացվել 7 միջազգային գիտաժողովներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Հիմնահարցը նախկինում գիտական ուսումնասիրության չի ենթարկվել: Նյութը ներկայացվել է հիմնականում սկզբնաղբյուրների հիմքի վրա:

Հիմնահարցի հետազոտման համար կարևոր աղբյուր են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվի, Գրականության և արվեստի թանգարանի տարբեր ֆոնդերում պահվող փաստաթղթերը: Առանց դրանց ուսումնասիրման անհնար կլիներ ամբողջական տեսքի բերել թեման:

Պատերազմի տարիներին Թուրքիայի բաժանման, դիվանագիտական պայքարի, համաձայնագրերի, Կիլիկիայի նկատմամբ տերությունների ձգտումների մասին չափազանց արժեքավոր է Եվգենի Ադամովի խմբագրությամբ լույս տեսած ժողովածուն, որում ընդգրկված են ցարական կառավարության՝ Հայկական հարցին նվիրված պաշտոնական և գաղտնի գրեթե բոլոր փաստաթղթերը[1]:

Կիլիկիայում իրականացված տեղահանության, կոտորածների մասին փաստական հարուստ նյութ են պարունակում Կիլիկիայի կաթողիկոսական դիվանի վավերագրերը[2]:

Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի միավորմամբ հայկական ինքնավարություն ստեղծելու 1914 թ. հայ գործիչների ձգտումներին, ցարի պատասխանին, 1915-1916 թթ. Ջեմալ փաշայի հետբանակցությունների խնդրին որոշ չափով իր երկհատոր աշխատության առաջին հատորում անդրադարձել է Բորիս Բորյանը[3]:

Անտանտի երկրների բանակցությունները, նրանց պետական գործիչների ու դիվանագետների տեսակետները ուսումնասիրելու տեսանկյունից չափազանց արժեքավոր են

---

[1] Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е. Адамова, Москва, 1924.

[2] Կիլիկեան կսկիծներ: Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն, 1903-1915, Պէյրութ, 1927:

[3] Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М.-Л., 1928.

Աշոտ Հովհաննիսյանի[4] և Ջոն Կիրակոսյանի[5] խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուները: Դրանցում ընդգրկված են տարբեր արխիվներում պահվող կարևոր նյութեր:

Կիլիկիահայերի տեղահանության հետ կապված փաստաթղթեր կան Մկրտիչ Ներսիսյանի խմբագրությամբ հայերի ցեղասպանությանը նվիրված ժողովածուի մեջ[6]:

Կարևոր սկզբնաղբյուր է սփյուռքահայ պատմաբան Վաչե Ղազարյանի անգլերենով հրատարակած փաստաթղթերի ժողովածուն, որը նվիրված է Պողոս Նուբարի քաղաքական գործունեությանն ու Հայկական հարցին, և որտեղ ընդգրկված են ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական, հայկական տարբեր արխիվներում պահվող փաստաթղթեր[7]: Նրանում ներառված են Հայկական հարցի շուրջ 1915-1918 թթ. տեղի ունեցած բանակցությունների, քննարկումների, առաջ քաշված նախագծերի ու դրանց ընթացքի վերաբերյալ 242 արխիվային փաստաթղթեր:

Հայաստանի ու Կիլիկիայի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման մասին հետաքրքիր փաստաթղթեր կան Արմեն Մարուքյանի հրատարակած ժողովածուներում[8]: Հայկական հարցում Ռուսաստանի դիրքորոշման մասին կարևոր է նաև վերջինիս աշխատությունը[9]:

Սկզբնաղբյուրային կարևոր աշխատություն է ֆրանսահայ պատմաբան Արթուր Պեյլերյանի կազմած «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)» փաստաթղթերի ժողովածուն: Այստեղ ներկայացված են ֆրանսիական տարբեր արխիվներում պահվող Հայկական հարցին ու ցեղասպանությանը վերաբերող 757 փաստաթղթեր: Այն չափազանց կարևոր սկզբնաղբյուր է 1915-1916 թթ. հայկական զորամաս կազմավորելու, Կիլիկիայում ափհանում կատարելու, մուսալեռցիների ռազմական կարողություններն օգտագործելու ֆրանս-բրիտանական քննարկումների մասին: Այստեղ Հայկական լեգեոնի կազ-մավորման և նախապատմության լուսաբանման, Կիլիկիայի նկատ-

---

[4] «Հայաստանի ավտոնոմիան» յեվ Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեվան, 1926:

[5] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972:

[6] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1983.

[7] Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996.

[8] Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, Երևան, 2001: Ռուսաստանը և Հայոց ցեղասպանությունը 1915-1917 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 2004:

[9] Марукян А., Армянский вопрос и политика России (1915-1917 гг.), Ереван, 2003.

մամբ ֆրանսիական գործիչների հավակնությունների վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր կան: Ներկայացված է հարցի շուրջ ֆրանսիացի պետական ու ռազմական գործիչների գրեթե ողջ պաշտոնական գրագրությունը: Օգտվել ենք Երևանյան երկհատոր հրատարակությունից, որը լույս է տեսել 2005 թ.՝ պատմագիտության դոկտոր Վարուժան Պողոսյանի հայերեն թարգմանությամբ: Առաջին հատորում ներառված են 1914 թ. սեպտեմբերից մինչև 1917 թ. հունիս թվագրված 1-369 փաստաթղթերը[10], իսկ երկրորդում՝ 370-757 փաստաթղթերը, որոնք ընդգրկում են 1917 թ. հունիսից մինչև 1919 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը[11]:

Հայաստանի ազգային արխիվը և Սևծովյան ու Կասպիական տարածաշրջանի սոցիալական և քաղաքական հետազոտությունների ինստիտուտը համատեղ հրատարակել են Առաջին աշխարհամարտին հայերի մասնակցության մասին փաստաթղթերի ժողովածու: Նրա վերջին բաժինը նվիրված է Արևելյան լեգեոնին[12]:

Սուրեն Պարթևյանը, ով Կահիրեի Ազգային միության ատենադպիրն է եղել, «Արարա: Հայկական լեգեոնը» հուշագրական գրքույկով առաջինն էր, որ անդրադարձավ Հայկական լեգեոնի գործունեությանը և Արարայի ճակատամարտին[13]: Այն գրված է մեծ հուզականությամբ, որոշ հատվածներ գեղարվեստական բնույթի են:

Միհրան Տամատյանի հուշերը սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունեն մեր թեմայի համար: Նա՝ որպես ականատես ու անմիջական մասնակից, ներկայացնում է Կիլիկիայում ափհանում կատարելու շուրջ որոշ նախագծեր և ամերիկահայերի կամավորագրության կազմակերպման գործընթացը[14]:

Մինչ այժմ Հայկական լեգեոնի մասին գրված գրքերից ամենահաջողվածն ամերիկահայ կամավորական Տիգրան Պոյաճյանի հուշագրությունն է[15]: Հեղինակ-ականատեսը ներկայացրել է ոչ միայն իր հուշերը, այլ նաև բազմաթիվ կամավորների հուշեր, նյութեր է քաղել գրքերից ու մամուլից: Տ. Պոյաճյանը փորձել է լուսաբանել Հայկական լեգեոնի կազմավորման ու գործունեության հետկապված խնդիրներ:

---

[10] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. Ա, Երևան, 2005:

[11] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. Բ, Երևան, 2005:

[12] Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.). Москва, 2014.

[13] Պարթեւեան Ս., Արարա: Հայկական լեգէոնը, Իզմիր, 1919:

[14] Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պէյրութ, 1985:

[15] Պոյաճեան Տ., Հայկական լեգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Ուօրթթաուն, 1965:

Հետաքրքիր է նախկին լեգեոնական Խորեն ավագ քահանա Աճեմյանի հուշագրությունը[16]:

Լեգեոնի մասին հուշեր է թողել ամերիկահայ լեգեոնական Մինաս Թաթարյանը: Նրա՝ զենքի ընկերներից Լևոն Գույումճյանն այդ հուշերը հետագայում ուղարկել է Ներսես վարդապետ Բախտիկյանին, ով էլ 1960 թ. Անթիլիասում հրատարակել է «Կամաւորի մը յուշերը» վերնագրով և գրել առաջաբանը: Հուշագրության մեջ նկարագրվում է ամերիկահայերի կամավորագրությունը լեգեոնին, նրանց մասնակցությունը Արարայի ճակատամարտին և Կիլիկիայի ազատագրումը:

Մուսալեռցիների փրկության և ֆրանսիացի սպաների կողմից նրանց ռազմական մարզումների կազմակերպման, լեգեոնի կազմավորման մասին բավական հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ֆրանսիական բանակի ծովային սպա, այդ իրադարձությունների անմիջական մասնակից Տիրան (Շառլ) Թեքեյանի հուշագրությունը[17]:

Լեգեոնականների մասին կենսագրական հարուստ տեղեկություններ է հաղորդում ամերիկահայ կամավորական Գրիգոր Մուրադյանը[18]:

Թեմայի ուսումնասիրությունն ամբողջացնելու, մեծ տերությունների քաղաքականությունը, ձգտումները հասկանալու, որոշ խնդիրներ ճշգրտելու հարցում արժեքավոր են օտարերկրյա պետական գործիչների՝ Ռուսաստանի ու Բրիտանիայի վարչապետներ Ալեքսանդր Կերենսկու[19], Դեյվիդ Լլոյդ Ջորջի[20], արտգործնախարարներ Սերգեյ Սազոնովի[21] ու Էդուարդ Գրեյի[22], Բրիտանիայի և Թուրքիայի ռազմածովային նախարարներ Ուինստոն Չերչիլի[23] և Ջեմալ փաշայի[24], Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի[25], Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Մորիս Պալեոլոգի[26] հուշերը:

1914 թ. գրված Գաբրիել Մնացականյանի «Հայկական հարցի լուծումը» ռուսերեն աշխատությունը նպատակ ունի ռուս ընթերցողին ներկայացնել ու լուսաբանել հայության պահանջները և հիմնավորել ռուսական շահերն Արևմտյան

---

[16] Աճեմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, Պէյրութ, 1967:
[17] Թեքեյան Շ., Մուսալեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր, Երևան, 2002:
[18] Մուրատեան Գ., Հայրենիքին ուխտաւորները վրեժին ճամբուն վրայ, Կ.Պոլիս, 1920:
[19] Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, Москва, 1993.
[20] Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957.
[21] Сазонов С.Д., Воспоминания, Москва., 2002.
[22] Grey Ed., Twenty-Five Years, 1892-1916, vol. II, New York, 1925.
[23] Churchill W., The World Crisis, v. 1, Toronto, 1923.
[24] Memories of a Turkish statesman, 1913-1919: By Djemal Pasha, New York, 1922.
[25] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990:
[26] Палеолог М., Царская Россия во время мировой войны, Москва, 1991.

Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ Ռուսաստանի հովանու տակ կիսանկախ հայկական պետություն ստեղծելու դեպքում[27]:

Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանի ինքնավարության գաղափարին է նվիրված 1915 թ. Լեյզեր Օշերովսկու գրած փոքր աշխատությունը[28]:

Պատերազմի տարիներին հայկական ինքնավարության գաղափարը բարձրացվել և քարոզվում էր հնչակյան գործիչների կողմից: Դրանք ներկայացված են Ստեփան Սապահ-Գյուլյանի[29], Անդրանիկ Կենճյանի[30], Արսեն Կիտուրի[31] աշխատանքներում:

Ջոն Կիրակոսյանը «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.» աշխատության մեջ անդրադարձել է մեր ուսումնասիրության շրջանակներում բարձրացված որոշ հարցերի[32]:

Հայկական լեգեոնի կազմավորման, իրավական կարգավիճակի մասին գիտական հետազոտություն է իրականացրել Արամ Գարամանուկյանը[33]: Աշխատության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել Ֆրանսիայի արխիվներում պահվող բազմաթիվ փաստաթղթեր:

Երվանդ Գասպարյանն իր մեծարժեք ուսումնասիրության մեջ լուսաբանել է Կիլիկիայում ափհանում կատարելու որոշ նախագծեր և դրանց ձախողումը Ֆրանսիայի ընդդիմության պատճառով[34]:

Լիլիթ Հովհաննիսյանի մենագրության մեջ անդրադարձ կա 1914-1917 թթ. մեծ տերությունների հավակնություններին Կիլիկիայում[35]:

Մեծ տերությունների քաղաքականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին լուսաբանվել է Գալուստ Գալոյանի աշխատություններում[36]:

---

[27] Мнацаканянъ Г., Разрѣшеніе Армянскаго Вопроса, Москва, 1914.

[28] Ошеровскій Л., Идея автономнаго строя въ Турецкой Арменіи подъ протекторатомъ Россіи, Пятигорскъ, 1915.

[29] Սապահ-Գիւլեան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրէ, 1915:

[30] Կէնճեան Ա., Հալածականի յուշեր 1914-1918, Պէյրութ, 1964: Կէնճեան Ա., Սոց. Դէմ. Հնչակեան կուսակցութիւնը եւ Կիլիկեան ինքնավարութեան աքթը (Կիլիկեան յուշեր՝ պատմութեան համար) 1919-1921, Պէյրութ, 1958:

[31] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր՝ Ա.Կիտուր, հ. Ա, Բ, Պէյրութ, 1962, 1963:

[32] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967:

[33] Գարամանուկեան Ա., Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ե, Պէյրութ, 1974, էջ 39-90: Գարամանուկեան Յ., Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, Ֆորթ Լի, 1998, էջ 203-268:

[34] Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, 2000:

[35] Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թթ., Երևան, 2002:

1915 թ. Ալեքսանդրետի ուղղությամբ ռազմական գործողություններ ծավալելու նախագծերին, մուսալեռցիների փրկության և Հայկական լեգեոնի կազմավորման որոշ հարցերի անդրադարձել է Տիգրան Սարուխանյանը[37]: Հեղինակը լայնորեն օգտագործել է բրիտանական աղբյուրներ և ուսումնասիրություններ:

Կիլիկիահայության տեղահանությանը և Հայկական լեգեոնի համառոտ պատմությանն անդրադարձել է Ռուբեն Գասպարյանը[38]: Նա Հայաստանում առաջին պատմաբանն է, որ փորձել է գիտականորեն ներկայացնել լեգեոնի պատմությունը:

1917 թ. ռուսական հեղափոխության հետևանքով ստեղծված նոր իրավիճակի և Հայկական հարցի մասին հետաքրքիր և արժեքավոր ուսումնասիրություն է Վահան Մելիքյանի աշխատությունը[39]:

1917-1918 թթ. իրադարձությունների, ինքնավար ու միասնական Հայաստան ստեղծելու հայկական ձգտումների, այդ հարցում մեծ տերությունների քաղաքականության մասին հետաքրքիր փաստեր է ներկայացրել Հրանտ Ավետիսյանը[40]:

Մուշեղ արք. Սերոբյանի աշխատությունում[41] որոշ տեղեկություններ կան Հայաստանի ու Կիլիկիայի շուրջ Անտանտի երկրների միջև ընթացող դիվանագիտական քննարկումների, Հ. Ջավրիյանի բանակցությունների, Կիլիկիայում ափհանում կատարելու նախագծերի մասին: Հեղինակը եղել է Կիլիկիայի թեմի առաջնորդ, հայկական կամավորագրության ջատագովներից ու կազմակերպիչներից:

Պատմագիտության դոկտոր Կլիմենտ Հարությունյանը հոդվածով[42] ներկայացրել է լեգեոնի համառոտ պատմությունը: Այն հիմնված է սփյուռքում լույս տեսած հուշագրությունների նյութի վրա:

Ամերիկահայության կամավորագրության հետ կապված խնդիրներ են լուսաբանված Քնարիկ Ավագյանի արժեքավոր ուսումնասիրություններում[43]:

---

[36] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

[37] Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, 2005:

[38] Գասպարյան Ռ., Հայկական լեգեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թիվ 1, էջ 3-15: Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երևան, 2005:

[39] Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997:

[40] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

[41] Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով: Վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրէ, 1948:

[42] Հարությունյան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը 1916-1920 թվականներին, ՊԲՀ, 1999, թիվ 2-3, էջ 101-111:

[43] Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, Նույնի,

Ստեփան Պողոսյանի եռահատոր «Հայոց ցեղասպանության պատմություն» աշխատության երրորդ հատորում անդրադարձ կա Կիլիկիահայության թվաքանակին, տեղահանությանը, կոտորածին և որոշ վայրերում տեղի ունեցած ինքնապաշտպանություններին Մեծ եղեռնի ժամանակ[44]:

Մուսալեռցիների ինքնապաշտպանության, Հայկական լեգեոնի կազմավորման և կամավորագրության պատճառների, Կիլիկիայի ազատագրման մասին արժեքավոր տեղեկություններ կան Մարտիրոս Գուշագճյանի և Պողոս Մատուռյանի խմբագրությամբ հրատարակված ծավալուն աշխատության մեջ[45]:

Հովհաննես Թոփուզյանն անդրադարձել է Հայկական լեգեոնի կազմավորմանը, Պաղեստինյան ճակատամարտում նրա զբաղեցրած դիրքերին[46]:

Ավետիս Յափուճյանն անդրադարձել է Հայկական լեգեոնի կազմավորման և գործունեության հետ կապված խնդիրներին, մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականությանը, Կիլիկիայում ափհանում կատարելու որոշ նախագծերի[47]:

Մեգիդոյի ճակատամարտի լուսաբանման հարցում օգտվել ենք Եգիպտական ռազմարշավային ուժերում լոնդոնյան լրատվամիջոցների պաշտոնական ռազմական թղթակից Վիլյամ Մեսիի[48], ավստրալիացի ռազմական պատմաբան Ֆրեդերիկ Մորլի Քաթլոքի[49] և ավստրալիացի ռազմական լրագրող, պետական գործիչ Հենրի Սոմեր Ջուլետի[50] մեծարժեք աշխատություններից: Դրանք թույլ են տվել ճշգրտել ու լուսաբանել ճակատամարտի ընթացքը, հայկական զինուժի

Ամերիկահայերի հասարակական-քաղաքական գործունեությունը Սևրի պայմանագրի նախորդող տարիներին, «Մեծ եղեռն. Դատապարտումից հատուցում (Հոդվածների ժողովածու), Երևան, 2011, էջ 50-63: Նույնի, Կիլիկիահայութիւնը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական Լեգէոնը», «Հասկ» Հայագիտական տարեգիրք, ԺԱ տարի, 2007-2008, Անթիլիաս, 2009, էջ 61-79: Նույնի, Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ սկզբնավորումից մինչև 1985թ., Հայ գաղթականությունը և Հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985թթ., Միջազգային գիտաժողով 8-10 հոկտեմբեր 2011, Երևան-Ծաղկաձոր, զեկուցումներ, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2011:

[44] Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 3, Երևան, 2011:

[45] Յուշամատեան Մուսալերան, Խմբագրեցին Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, Պէյրութ, 1970:

[46] Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978: Նույնի, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986:

[47] Եափուճեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Գահիրէ, 1977:

[48] Massey W. T., Allenby's final triumph, London, 1920.

[49] Cutlack F. M., The Australian Flying Corps in the Western and Eastern theatres of War 1914-1918, Sydney, 1941.

[50] Gullett H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918, Sydney, 1941.

դերակատարությունը նրանում: Վերջիններս եղել են դեպքերի ականատեսներ ու բավական իրազեկված անձինք, հետևաբար՝ նրանց տեղեկությունները, կարելի է ասել, ճշգրիտեն:

Էդուարդ Ֆիցջերալդի[51] և Պաուլ Հելմրիխի[52] ուսումնասիրությունները կարևոր են Մերձավոր Արևելքում և Կիլիկիայում Անտանտի երկրների հավակնությունները և հակասությունները հասկանալու համար:

Մոսկվայի "Армянскій Вѣстникъ" պարբերականը 1916-1918 թթ. ներկայացրել ու վերլուծել է Հայաստանի ինքնավարության կամ անկախության գաղափարը, այդ խնդիրների շուրջ հայ և օտարազգի գործիչների տեսակետները: Բուխարեստում Ստեփան Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ինքնավար Հայաստան» պարբերականը կարևոր դեր էր ստանձնել Հայաստանի ինքնավարության հնչակյան տեսակետները ներկայացնելու և քարոզելու գործում: Հայաստանի և Կիլիկիայի ապագայի հետ կապված խնդիրները աշխարհամարտի տարիներին քննարկվել են Ս. Էջմիածնի «Արարատ», Մարսելի «Արմենիա», Փարիզի «Վերածնունդ» պարբերականներում:

Սակայն, պետք է արձանագրենք, որ Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական պարբերականներում Կիլիկիայի ճակատագրին առնչվող հոդվածները չափազանց քիչ, կարելի է ասել՝ հատուկենտեն: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ դեռևս պարզ չէին մեծ տերությունների իրական հավակնություններն ու ախորժակները, անհայտ էր՝ ո՞վ էր հաղթելու պատերազմում: Հայ գործիչները ձգտում էին միասնական հայկական պետականության ստեղծմանը, սակայն, հաշվի առնելով իրադարձությունների զարգացման տրամաբանությունը և ուժերի հարաբերակցությունը, ստիպված էին համակերպվել տերությունների շահերին ու ձգտումներին, փորձում էին հնարավորինս սիրաշահել վերջիններիս: Հետևաբար՝ մամուլում շատ չէին բարձրաձայնում հայության ձգտումները, այլ դրանց մասին բանակցում էին գաղտնիության պայմաններում: Նաև սրանով է պայմանավորված, որ Կիլիկիայի ապագայի վերաբերյալ մամուլում բավական քիչ են եղել հրապարակումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 478 էջ:

---

[51] Fitzgerald Edward Peter, France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 66, No. 4, Dec., 1994, pp. 697-725.

[52] Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation of the 1917 St. Jean de Maurienne Agreement, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 48, No. 2, June, 1976, pp. 99-139.

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1.1 Կիլիկիայի ռազմաքաղաքական դիրքը, տնտեսական հնարավորությունները, վարչական բաժանումը և բնակչությունը պատերազմի նախօրյակին: Կիլիկիան աշխարհագրական, ռազմավարական կարևոր դիրք է զբաղեցնում Մերձավոր Արևելքում, այն հարուստ է օգտակար հանածոներով ու բերրի դաշտերով: Նրա երկաթուղային ցանցն ու նավահանգիստները զարգացման մեծ հնարավորություններ էին ապահովում: Բնական է, որ նման հարուստ տարածքն իր վրա էր բևեռելու մեծ տերությունների ուշադրությունը, իսկ հայերը ձգտելու էին այնտեղ վերականգնել հայկական պետականությունը: Ադանայի, Հալեպի, Սեբաստիայի, Անկարայի վիլայեթների միջև բաժանված Կիլիկիայում բնակվում էր ավելի քան 400.000 հայ բնակչություն[53]: Չնայած օսմանյան կայսրության հայահալած ու ջարդարարական քաղաքականությանը՝ նախապատերազմյան շրջանում երկրամասի բնակչության կեսը դեռևս հայերն էին:

1.2 Կիլիկիան հայ գործիչների ծրագրերում: Առաջին համաշխարհային պատերազմը հայ գործիչների մեջ հույսեր էր արթնացրել, որ Օսմանյան կայսրության պարտությունը թույլ կտար լուծելու հայկական հարցը: Պատերազմի սկզբից նրանք ընտրեցին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավարություն ձեռք բերելու տեսլականը[54]: Բարենորոգումների՝ նախկինում առաջ քաշված ծրագրերն արդեն անբավարար էին համարվում: Թվում էր՝ միջազգային իրադրությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծել հայության երազանքներն իրականացնելու՝ թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր հայկական տարածքները մեկ ինքնավար մարզի մեջ միավորելու, որն ապագայում պայմաններ կստեղծեր անկախության վերականգնման համար:

Հ. Ջավրյանի պետրոգրադյան բանակցությունները ցույց տվեցին, որ ռուսական իշխանությունները 1915 թ. առաջին կեսին դեռ չէին կողմնորոշվել Հայաստանի ապագայի հարցում: Գոյություն ունեին տարբեր նախագծեր, սակայն ռուսական կողմը սպասում էր՝ դաշնակիցների տեսակետները նույնպես հասկանալու համար[55]: Հ. Ջավրյանը և Պ. Նուբարը Անտանտի տերություններին ներկայացրին ինքնավարության ծրագիր,

---

[53] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, թ. 11-12:
[54] Նույն տեղում, գ. 76, թ. 2-3:
[55] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 3-16:

որով ստեղծվելու էր ինքնավար Հայաստան՝ սուլթանի անվանական գերիշխանության տակ ու եվրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Սուլթանը Հայաստանի ներքին գործերին միջամտելու իրավունք չէր ունենալու, երկրում թուրքական զորք չէր լինելու: Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի խնամակալության ներքո: Ինքնավար Հայաստանն ընդգրկելու էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգները և Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրետից պատրաստ էին հրաժարվել, որպեսզի խուսափեին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ընդդիմությունից[56]: Այդ նախագիծը ներկայացվել էր այն հույսով, որ ռուսական իշխանությունները համաձայն էին դրան:

Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածների մասին լուրերը ստանալուց հետո հայ գործիչների համար առաջնահերթ խնդիր դարձավ արևմտահայերի ոչնչացումը կանխելու հնարավորություններ փնտրելը: Նման պայմաններում երկրորդական դարձան ինքնավարության նախագծերը, և բոլոր ջանքերն ուղղվեցին ցեղասպանության ենթարկվող ժողովրդի փրկությանը[57]:

Մինչև 1915 թ. կեսերը ռուսական իշխանությունները չէին բացառում, որոշ դեպքերում նույնիսկ իրենց շահերին համահունչ էին համարում հայկական ինքնավարության ստեղծումը՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ: Սակայն տերությունների միջև գաղտնի համաձայնություններն ու հակասությունները և հատկապես հայոց ցեղասպանության իրականացման հետևանքով արևմտահայ-կական տարածքների գրեթե ամբողջական հայազրկումն օրակարգից դուրս բերեցին ինքնավար Հայաստանի գաղափարը: Հայաթափված Հայաստանն ու Կիլիկիան այլևս չէին դիտվում որպես հայերի պետական ինքնակազմակերպման տարածք: Նման պայմաններում Ռուսաստանը որդեգրեց Արևմտյան Հայաստանը գրավելու ուղեգիծ, իսկ հայկական ձգտումներն ու շահերը դրվեցին մի կողմ[58]:

1.3 Անտանտի երկրների հավակնությունները Կիլիկիայում: Ռուսական քաղաքական ու ռազմական վերնախավում հետաքրքիր քննարկումներ են ծավալվում Հայկական հարցի շուրջ, որոնք արտաքնապես դրսևորվել են նախ՝ իբրև հայ քաղաքական շրջանակներին տրված հուսադրող, բայց խիստ ընդհանուր հավաստիացումների, իսկ հետագայում՝ հայաթափված Արևմտյան Հայաստանի ռազմակալման անհրաժեշտության մասին հորդորների տեսքով: Ռուսական նկրտումների մեջ էր

---

[56] Boghos Nubar's Papers, p. 80-84. Հայաստանը միջազգային դիվանագիտության … փաստաթղթերում, էջ 371-374:

[57] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 108:

[58] Дживелегов А., О "Дживелеговской Армении" и о "негодовании патриотически настроенных русских людей", "Армянскій вѣстникъ", 1916, N 32, с. 2-3.

Արևմտյան Հայաստանը և հնարավորության դեպքում Կիլիկիան, որով ելք կապահովվեր դեպի Միջերկրական[59]: Տիրելով Հայաստանին ու Կիլիկիային՝ Ռուսաստանը գերիշխող դիրք կունենար Մերձավոր Արևելքում, և նրա հետագա առաջխաղացումը տարածաշրջանում կասեցնելը կլիներ չափազանց բարդ: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան դեմ էին իրենց դաշնակցի այդչափ առաջխաղացմանը Մերձավոր Արևելքում, քանի որ իրենց սեփական նկրտումներն ունեին Կիլիկիայում, Սիրիայում, Միջագետքում, Պարսից ծոցի ավազանում: Այդ ամենով պայմանավորված՝ նրանք փորձում էին Ռուսաստանին հնարավորինս հեռու պահել Սիրիայից ու Միջագետքից: Այսպիսով՝ Օսմանյան կայսրության բաժանման հարցը քննարկելիս Անտանտի երկրների միջև որոշ անհամաձայնություններ առաջ եկան Կիլիկիայի պատկանելության խնդրում: Ռուսաստանը, գիտակցելով, որ դաշնակիցները դեմ կլինեն իր առաջխաղացմանը դեպի Միջերկրական Կիլիկիայի վրայով, որոշեց հրաժարվել այդ երկրամասի նկատմամբ իր հավակնություններից՝ հօգուտ Ֆրանսիայի[60]: Վերջինս պատերազմի սկզբից հայտարարել էր իր հավակնությունները Կիլիկիայի ու Սիրիայի նկատմամբ[61]: պետական գործիչների համար գերադասելի էր Միջերկրական դուրս գալ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով:

Մեծ Բրիտանիան նույնպես որոշակի հավակնություններ ուներ Կիլիկիայում: Նա ամբողջ Կիլիկիային տիրելու համար չէր պատրաստվում հակամարտության մեջ մտնել Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի հետ, սակայն հնարավորության դեպքում ցանկանում էր տիրել ռազմավարական և տնտեսական մեծ կարևորություն ունեցող Ալեքսանդրետի նավահանգստին[62]:

1916 թ. մայիսին ստորագրված Սայքս-Պիկոյի համաձայնագրով Արևմտյան Հայաստանի հյուսիսային ու արևելյան տարածքներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ հարավային ու արևմտյան տարածքները՝ Ֆրանսիային[63]: Արևմտյան Հայաստանը, փաստորեն, բաժանվելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև: Բրիտանական դիվանագիտության ծուղակներից էր հարավային Հայաստանի և Քրդստանի առաջարկը Ֆրանսիային, որի սահմանները պետք է հասնեին մինչև ռուս-պարսկական սահման: Փաստորեն՝ ռուսների առաջխաղացումը դեպի ավելի հարավ բրիտանական կողմը փորձում էր այս անգամ կանխել Ֆրանսիայի միջոցով, որը պետք

---

[59] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 32-33:

[60] Палеолог М., Царская Россия во время мировой войны, с. 171. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հ. I, էջ 246:

[61] Раздел Азиатской Турции, с. 21.

[62] Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement with Russia: The British Promise of November 1914, “The American Historical Review”, Vol. 70, No. 4, Jul., 1965, p. 1028.

[63] Հայաստանը միջազգային դիվանագիտության … փաստաթղթերում, էջ 391-395: Раздел Азиатской Турции, с. 185-188.

է փոխարիներ կործանված օսմանյան պատնեշին: Իսկ բրիտանական տիրույթները ձգվում էին ֆրանսիականից հարավ՝ թիկունքում: Այսպիսով՝ բրիտանական կողմը գտել էր այն խնդրի լուծումը, թե ինչպես խոչընդոտի ռուսական առաջխաղացմանը դեպի Միջերկրական և Սուեզի անցուղի: Հետևաբար՝ այլևս կարիք չկար պահպանելու Օսմանյան կայսրությունը, որի համար հսկայական ջանքեր էր գործադրել բրիտանական դիվանագիտությունը: Սայքս-Պիկոյի համաձայնագրով տարբեր պետությունների միջև բաժանվում ու մասնատվում էին հայկական, արաբական, քրդական, ասորական տարածքները: Այն նոր խառնաշփոթի պատճառ կարող էր դառնալ հետպատերազմյան Մերձավոր Արևելքում: Այս քաղաքականությունը, որն իր շարունակությունն ունեցավ հետագայում, մինչև այսօր էլ անլուծելի խնդիրներ են առաջ բերել այդ տարածաշրջանում:

1916-1917 թթ. Կիլիկիան լուրջ կռվախնձոր էր դարձել Իտալիայի ու Ֆրանսիայի միջև: Սակայն Ֆրանսիան չհրաժարվեց Կիլիկիայի նման հարուստ և ռազմավարական առումով կարևոր երկրամասին տիրելու գաղափարից, որի արդյունքում իտալական նկրտումները բավարարում ստացան Փոքր Ասիայի արևմտյան և կենտրոնական շրջաններում[64]:

1.4 Ջեմալ փաշայի հետ բանակցությունների հարցը: 1915 թ. աշնանը ռուսական դիվանագիտությունն առաջ քաշեց Օսմանյան կայսրությունը պատերազմից դուրս բերելու մի նախագիծ[65]: Քննարկվում էր օսմանյան ռազմածովային նախարար և 4-րդ բանակի հրամանատար Ջեմալին համոզել միանալու Անտանտի երկրներին և ապստամբելու սեփական կառավարության դեմ: Իրական հնարավորություն կար երիտթուրքական եռապետերից մեկին թեքել Անտանտի կողմը, դուրս բերել սեփական պետության դեմ՝ օգտագործելով նրա անձնական թշնամանքը Էնվերի դեմ և անսահման փառասիրությունը: Հաջողության դեպքում օսմանյան պետությունը դուրս կգար պատերազմից, գուցե նաև միանար Անտանտին: Ջեմալի անհաջողության դեպքում՝ թուրքերը բավական կթուլանային ներքին երկպառակտման հետևանքով, միաժամանակ հնարավոր կդառնար գրեթե առանց դիմադրության Անտանտի երկրների զորքեր մտցնել Պաղեստին, Սիրիա, Կիլիկիա: Նախագիծը ռուսական դիվանագետներին առաջարկել էին հայերը, որոնք հույս ունեին փրկելու Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում ապաստանած հայ տարագիրներին[66]: Այդ տարածքները գտնվում էին Ջեմալի վերահսկողության տակ: Միաժամանակ այդ ծրագրով նախատեսվում էր Ջեմալի իշխանության ներքո ստեղծել ինքնավար Հայաստան՝ Արևմտյան

---

[64] Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation, p. 107-108. Раздел Азиатской Турции, с. 348-349.

[65] ՀԱԱ, Ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 1-2: Раздел Азиатской Турции, с. 142-143.

[66] Քէչեան Ա., Կարմիր դրուագներ հերոսներու կեանքեն, 1915-1918, Պուքրեշ, 1938, էջ 179-195:

Հայաստանի և Կիլիկիայի միավորմամբ: Ֆրանսիական և բրիտանական իշխանություններն ավելի ընդարձակ նկրտումներ ունեին Մերձավոր Արևելքում, և Ջեմալի հետ դաշինքը կարող էր դրանց խանգարել: Ահա այդ հանգամանքով էր պայմանավորված բանակցությունների նկատմամբ նրանց սկզբնական վերապահ, ապա նաև բացասական դիրքորոշումը[67]: Ի վերջո դահանգեցրեց նրան, որ բանակցություններն այդպես էլ տեղի չունեցան:

1.5 Նոր իրադրությունը 1917 թ. և 1918 թ. սկզբին: 1917 թ. միջազգային նոր իրավիճակ ստեղծվեց, երբ Ռուսաստանում տապալվեց ցարական վարչակարգը, պատերազմի մեջ մտավ ԱՄՆ-ը: Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը հանդես եկավ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիմքի վրա հաշտություն կնքելու հայտարարությամբ, միաժամանակ իր խնդիրներից մեկը համարեց ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը: Ռուսական կառավարության այդ դիրքորոշումը կրկին ոգևորեց հայ գործիչներին և նոր հույսեր արթնացրեց, քանի որ ցարական իշխանությունների վարած ոչ հայանպաստ քաղաքականությունը բավական ծանր հիասթափության պատճառ էր դարձել:

Միջազգային նոր իրադրության պայմաններում Պ. Նուբարը կրկին վերադարձավ միացյալ և ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարին, որից ժամանակին ստիպված էր եղել հրաժարվել ցարիզմի վարած գաղութային քաղաքականության հետևանքով: Նա միացյալ Հայաստան արտահայտության տակ նկատի ուներ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ու Կիլիկիան: Նա անհրաժեշտ էր համարում երկիրը դնել Անտանտի պետությունների ընդհանուր հովանու ներքո, իսկ նրանցից մեկը (գերադասելի էր համարում ԱՄՆ-ին) պետք է 10-15 տարով ստանձներ երկրի մանդատը՝ պաշտպանելու արտաքին հարձակումներից և աջակցելու քայքայված տնտեսության վերականգնմանը[68]: Հայ գործիչները, օգտվելով միջազգային բարենպաստ թվացող նոր իրավիճակից, փորձում էին վերջնական լուծման հասնել Հայկական հարցում: Ոմանք նույնիսկ սկսեցին բարձրաձայնել անկախ հայկական պետության ստեղծման մասին[69]:

Պաղեստինյան ռազմաճակատում բրիտանացիների դեպի հյուսիս առաջխաղացմանը զուգահեռ, ֆրանսիական գործիչների մոտ մեծանում էր անհանգստությունը, որ իրենց դաշնակիցը հետագայում կարող էր հետ կանգնել Սայքս-Պիկոյի համաձայնագրից, և Սիրիայի ու հայկական տարածքների կառավարումը վերցնել իր ձեռքը: Ֆրանսիան այդ տարածաշրջանում իրեն ավելի ամուր զգալու համար պետք է զորքեր ունենար, որպիսիք

---

[67] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների, էջ 676: Раздел Азиатской Турции, с. 167.

[68] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 14-15:

[69] Рѣчь А. К. Дживелегова въ совѣтѣ республики 20-го октября 1917 г., “Армянскій Вѣстникъ”, 1917, N 43-44, с. 4.

չուներ: Նա փորձում էր հենվել հայ և սիրիացի կամավորներից կազմավորված զորքերի վրա, սակայն այդ ժողովուրդներին սիրաշահելու համար անհրաժեշտ էր խոստանալ ինքնավարություն: Սակայն ֆրանսիական կառավարությունն այդպես էլ պաշտոնապես չհայտարարեց Հայաստանին և Սիրիային ինքնավարություն տալու պատրաստակամության մասին՝ չնայած տարածաշրջանով զբաղվող ֆրանսիացի պաշտոնյաների առաջարկներին[70]:

1917 թ. ռուսական հեղափոխությունների ալիքի վրա բարձրացավ անկախ հայկական պետություն կազմավորելու տեսլականը: Խորհրդային Ռուսաստանը[71], ապա նաև ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան կառավարությունները սկսեցին ճանաչել Հայաստանի անկախության հնարավորությունը[72]: Սակայն 1918 թ. սկզբին հայ քաղաքական միտքը դեռևս պատրաստչէր ընդունելու անկախության հեռանկարը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՓՀԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԸ

2.1 Հայկական նախագծերը: Հայ գործիչների համար ինքնավարությունից ավելի կարևոր էր կոտորածների կանխումը պատերազմի ընթացքում: Եթե հնարավոր էր համարվում կարճ ժամանակում Արևմտյան Հայաստանի գրավումը ռուսական բանակի կողմից, ապա Կիլիկիան հեռու էր Կովկասյան ռազմաճակատից, և տեղի հայությանը թուրքական կոտորածներից փրկելու համար հայ գործիչները ստիպված էին այլ ելք որոնել: Լավագույն տարբերակը Կիլիկիայում բրիտանական կամ ֆրանսիական զորքեր ափհանելը, նրանց օգնությամբ երկրամասը թուրքերից ազատագրելն էր, իսկ տեղի հայերն իրենց հերթին պատրաստակամ էին կռվել Անտանտի բանակների կողքին: Դա հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաև՝ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերն ի վիճակի չէին լինի ամբողջ ահավորությամբ իրականացնել Հայոց մեծ եղեռնը:

Կիլիկիայում ափհանում կատարելու նպատակով հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչները, տարբեր հասարակական գործիչներ, սկսած 1914 թ. վերջերից, բազմիցս դիմեցին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ռազմա-

---

[70] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 64-65, 71: Գարամանուկյան Ա., նշվ. աշխ, էջ 74-76:

[71] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 156-157:

[72] ՀԱԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 5: Little Edward, Armenia and Turkey, “Congressional Record”, Washington, March 8, 1918, vol. 56, p. 8. Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 39: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 19:

կան և քաղաքական շրջանակներին[73]: Ռուսական և բրիտանական իշխանություններն այդ առաջարկներին հաճախ հավանություն էին տալիս: Սակայն այդ նախագծերն այդպես էլ ընթացք չստացան: Չնայած Ֆրանսիան ձգտում էր պատերազմից հետո տիրել Կիլիկիային՝ սակայն ամեն կերպ խոչընդոտում էր հայերի կամ բրիտանացիների միջոցով Կիլիկիան գրավելու բոլոր նախագծերին: Դա պայմանավորված էր նրանով, որ ֆրանսիացիները բավարար զորք չունեին տարածաշրջանում, որպեսզի սեփական ուժերով լուծեին այդ խնդիրը, միաժամանակ հասկանում էին, որ եթե երկրամասն ազատագրվի հայկական կամ բրիտանական ուժերով, ապա պատերազմից հետո իրենց իրավունքների ճանաչումը Կիլիկիայում կլինի բավական բարդ: Դրանով էր պայմանավորված, որ Ֆրանսիան ամեն կերպ խոչընդոտում էր Կիլիկիան ազատագրելու նախագծերին:

Երիտթուրքերը տարագրությունն ու կոտորածը Կիլիկիայում սկսել են ավելի վաղ, քան՝ Արևմտյան Հայաստանում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ցանկացած պահի Անտանտի երկրները կարող էին զորք ափհանել Կիլիկիայում, իսկ թուրքերը բավարար ուժեր չունեին այն պաշտպանելու: Հետևաբար՝ իրենց թիկունքն ավելի ապահով դարձնելու համար թուրքերը շտապում էին տեղահանել տեղի հայ բնակչությանը: Կիլիկիայում հայ նշանավոր գործիչներին, մտավորականներին տարագրությունից առաջ զանգվածաբար չեն ձերբակալել կամ սպանել՝ ի տարբերություն մյուս նահանգների[74]:

Հայկական ուժերով Կիլիկիան ազատագրելու բազմաթիվ ծրագրերը կիլիկիահայության տեղահանությունից հետո անիրագործելի դարձան:

2.2 Անտանտի երկրների ռազմական նախագծերը: Համաշխարհային պատերազմի տարիներին Կիլիկիայում զորքերի ափհանում իրականացնելու և ռազմական գործողություններ ծավալելու նախաձեռնությամբ հանդես են գալիս Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Այդ հարցը քննարկվել էր նաև Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններում[75]: Թուրքական կողմը անհանգստանում

---

[73] ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, բ. 1, ց. 1, գ. 702: ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 78-80: Boghos Nubar's Papers, p. 3-5. Ռոստոմ: Նամականի (Մահուան ութսունամեակին առթիւ), Պէյրութ, 1999, էջ 625:

[74] ՀԱԱ, ֆ. 450, ց. 3, գ. 71, թ. 27-28:

[75] Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement, p. 1021, 1023. Churchill W., The World Crisis, p. 534. Fisher J., Memories and Records, vol. I, New York, 1920, p. 71-72, 79, 81-82. Եափուճեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Գահիրէ, 1977, էջ 1110-1111, 1118-1120: Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ (Ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրայ), Լոս Անճելըս, 1986, էջ 61-62: Գասպարյան Ե., նշվ. աշխ.,

էր Կիլիկիայում հակառակորդի ուժերի ափհանման հնարավորությունից[76], իսկ գերմանական գործիչներն այն համարում էին թուրքերի ամենաթույլ կետը[77]:

Դարդանելում ափհանում կատարելու բրիտանական իշխանությունները որոշումից հետո Կիլիկիան անուշադրության մատնվեց: Դառազմավարական լուրջ սխալ էր, որի հետևանքով բրիտանացիները ծանր պարտություն կրեցին, մեծ զոհեր տվեցին, վերացավ բրիտանական նավատորմի անպարտելիության մասին հավատը, վարկաբեկվեց նրանց հեղինակությունն Արևելքում, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման: Երկրամասը գրավելու Ֆրանսիայի անկարողությունը և բրիտանական գրավման դեմ նրա հարուցած խոչընդոտները չափազանց ծանր հետևանքներ ունեցան հայերի համար: Անտանտի զորքերի ափհանումը Կիլիկիայում կարող էր տեղահանությունից ու կոտորածից փրկել ոչ միայն տեղի հայությանը, այլ նույնիսկ՝ կանխել Մեծ եղեռնը:

Կիլիկիայում ճապոնական զորքերով ափհանում իրականացնելու բավական հետաքրքիր նախագիծ առաջ քաշվեց ֆրանսիական ռազմական իշխանությունների կողմից 1917 թ., սակայն այն նույնպես չգործադրվեց[78]:

2.3 Մուսալեռցիներին զինվորագրելու ֆրանս-բրիտանական ծրագրերը: 1915 թ. աշնանը մուսալեռցի քաջամարտիկների ռազմական ունակությունները հայրենի եզերքում կամ Կիլիկիայի որևէ այլ վայրում օգտագործելու գաղափարը լուրջ քննարկումների առիթ դարձավ ֆրանս-բրիտանական իշխանությունների համար: Մուսալեռցիները ոչ միայն պատրաստակամ էին կռվելու թուրքերի դեմ, այլ նույնիսկ իրենք էին բազմաթիվ դիմումներ կատարում հնարավորինս շուտ մարտական գործողություններին մասնակցելու համար[79]: Այս համատեքստում առաջադրվեցին մուսալեռցիների հիմքի վրա հայկական ավելի մեծ զորամաս կազմավորելու մասին մի քանի նախագծեր: 1915 թ. հոկտեմբերի վերջին իշխանության եկած ֆրանսիական նոր կառավարությունը ժամանակավորապես հրաժարվեց հայերի ռազմական ունակություններն օգտագործելու, Կիլիկիան ազատագրելու նախկինում առաջ քաշված ծրագրերից[80]: Այսպիսով՝ 1915 թ. ամռանը և աշնանը քննարկման առարկա դարձած

էջ 48-49: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 194-196:

[76] Memories of a Turkish statesman, p. 167.

[77] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 2, Երևան, 1983, էջ 68:

[78] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 9-13:

[79] Նույն տեղում, հ. I, էջ 151, 161, 170-176, 179, 194-196, 199-203: Գարամանուկեան Ա., Հայկական Լեգէոնը, էջ 63-66:

[80] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 226-228:

մի շարք ռազմական նախագծեր, որոնք առնչվում էին Մուսա լեռան մոտ դաշնակիցների կամ հայ կամավորների ափհանում կատարելուն, ժամանակավորապես սառեցվեցին:

Հայերի հարցում ֆրանսիական կողմի տատանումներից ու ձգձգումներից փորձեց օգտվել բրիտանական կողմը, որն իր վրա էր վերցրել Պորտ Սայիդի գաղթականական ճամբարը պահելու գործը: Սակայն դա չէր բխում Ֆրանսիայի շահերից: 1916 թ. հունվարից ֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը կրկին որոշում է իր վրա վերցնել մուսալեռցիներին զինվորական ծառայության վերցնելու նախաձեռնությունը, սակայն այս անգամ բազմիցս բախվեց բրիտանացիների դժգոհությանը և նրանց հարուցած խոչընդոտներին[81]:

Եգիպտոսի ֆրանսիական և բրիտանական զինվորական իշխանությունները ռազմական մարզումներ սկսեցին մուսալեռցիների հետ: Սակայն հայկական զորամաս կազմավորելուն դեմ արտահայտվեցին հայ ազգային գործիչների զգալի մասը, հատկապես՝ Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը: Դա պայմանավորված էր այն մտավախությամբ, որ թուրքերը հայ կամավորական բանակի գոյությունը կարող էին օգտագործել եղեռնից մազապուրծ մի քանի հարյուր հազար արևմտահայերին կոտորելու համար: Ի վերջո, որոշ ժամանակով հետաձգվեց հայկական կամավորական զորամաս կազմավորելու խնդիրը[82]: Չնայած դրան՝ մուսալեռցի մի քանի տասնյակ մարտիկներ, որոնք մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից, պարեկային ծառայություն էին կատարում Կիլիկիայի ափամերձ կղզիներում, իրականացնում դիվերսիոն-հետախուզական գործողություններ[83]:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ: ԱՐԵՎԵԼՅԱՆ (ՀԱՅԿԱԿԱՆ) ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

3.1 Հայկական զորամաս կազմավորելու հարցը 1916 թ. երկրորդ կեսին: Պատերազմում դաշնակիցների հաղթանակից հետո նախատեսվում էր, որ Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները անցնելու էին Ֆրանսիային: Վերջինիս էին անցնելու նաև Սիրիան և Լիբանանը: Հետևաբար՝ ֆրանսիական իշխանություններին անհրաժեշտ էր Միջերկրականի արևելքում զգալի ուժեր կենտրոնացնել, ավելի ակտիվ քաղաքականություն վարել, սեփական ազդեցությունը տարածել տեղի ժողովուրդների վրա: Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ 1916 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործերի և ռազմական նախարարությունները սկսեցին ամենայն լրջությամբ քննարկել Կիպրոսում 5.000-ոց հայկական զորամաս կազմավորելու հարցը:

---

[81] Նույն տեղում, էջ 249:
[82] Նույն տեղում, էջ 303:
[83] Թեքեյան Տ., նշվ. աշխ., էջ 43-49: Յուշամատեան Մուսալերան, էջ 130-131:

Լեգեոնի կազմավորման գործընթացն արագացնելու հարցում որոշակի դեր է ունեցել գեներալ Գ. Քլեյթոնի առաջարկը[84]: Իսկ հայ գործիչներն այս փուլում դեմ էին հայկական զորամասի կազմավորմանը, քանի որ վախենում էին թուրքերին ջարդերի նոր հնարավորություն տալուց: 1916 թ. սեպտեմբերին, երկարատև բանակցություններից հետո, Ֆրանսիան ձեռք բերեց Մեծ Բրիտանիայի համաձայնությունը Կիպրոսում հայ կամավորական զորամաս կազմավորելու վերաբերյալ[85]:

3.2 Լեգեոնի կազմավորման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը: Բրիտանացիների հետ համաձայնություն կայացնելուց բացի, ֆրանսիական կողմը պետք է ապահովեր նաև հայկական ղեկավար շրջանակների աջակցությունը: Անցյալում վերջինների դիմադրության պատճառով չէին կարողացել ըստ արժանվույն օգտագործել մուսալեռցիների մարտական կարողությունները: Սակայն այս անգամ խոսքը ոչ միայն սուետիահայերի մասին էր, որոնցից կարող էին ձևավորել մեկ կամ երկու վաշտ, այլ՝ կորպուսի կազմավորման խնդիր էր դրված: Հետևաբար՝ անհրաժեշտ էր արևմտահայ ազգային ղեկավարության համաձայնությունն ու սերտ համագործակցությունը: Հակառակ դեպքում՝ նախագիծը կարող էր ձախողվել: Ֆրանսիացի գործիչները սկսեցին Պ. Նուբարին համոզել, որպեսզի աջակցի հայկական լեգեոնի ստեղծման աշխատանքներին[86]: Սակայն առանց սպասելու հայ գործիչի պատասխանին, կամ նրան կանխապես դրական պատասխանի տրամադրելու նպատակով, արդեն Լ. Ռոմիոյին ուղարկել էին Եգիպտոս: Դրանով ֆրանսիացիները փորձում էին հասկացնել, որ իրենք հայկական կամավորական զորամաս ստեղծելու են առանց հաշվի առնելու Ազգային պատվիրակության կամ այլ հայկական քաղաքական ու հասարակական կառույցների կարծիքը: Ֆրանսիացի պաշտոնյաներն անձնական հանդիպումներում ինքնավարության մասին խոստումներ էին շռայլում, և դրանով սիրաշահում էին հայ ազգային գործիչներին[87], որոնք ստիպված էին բավարարվել եղածով: Այսպիսով՝ հայ գործիչներին մնում էր համակերպվել և հայկական զորամաս կազմավորելու դիմաց առավելագույն պահանջներ առաջ քաշել:

1916 թ. հոկտեմբերին Պ. Նուբարի, Մ. Սայքսի և Ժ. Պիկոյի միջև համաձայնություն կայացվեց Կիպրոսում ֆրանսիական դրոշի ներքո կռվող Հայկական լեգեոն կազմավորելու մասին, որի դիմաց Ֆրանսիան պետք է Կիլիկիային և իրեն անցնող մյուս հայկական տարածքներին պատերազմից հետո ինքնավարություն

---

[84] Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 67: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 309:

[85] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 342-343:

[86] Boghos Nubar's Papers, p. 368-370. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 357-358:

[87] Boghos Nubar's Papers, p. 384-386.

տար[88]: Սակայն ֆրանսիական կողմը այդպես էլ պաշտոնապես չհայտարարեց Կիլիկիային ինքնավարություն տալու պատրաստակամության մասին՝ չնայած Պ. Նուբարի բազմաթիվ հիշեցումներին ու բողոքերին: 1916 թ. վերջին ֆրանսիական իշխանություններն Ազգային պատվիրակության նախագահին առաջարկեցին պահանջել միացյալ հայկական պետության ստեղծում իրենց հովանավորության տակ[89]: Դերերը փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Հայ գործիչները ստիպված էին համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային: Մեծ տերությունները, եթե պատերազմի թեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված համաձայնագրերը, ապա բնական էր, որ պատերազմից հետո խաբելու էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայ ժողովրդին:

Հայկական զորաբանակ ստեղծելուն աջակցելը արդարացված և ճիշտքայլ էր: Դա հնարավորություն էր տալու պատերազմից հետո ճանաչվել Անտանտին դաշնակից պատերազմող կողմ, ինքնավարություն պահանջել Կիլիկիայում: Լեգեոնն անուրանալի դերակատարություն ունեցավ Լիբանանում, Սիրիայում ծանր պայմաններում հայտնված հայ տարագիրներին աջակցելու հարցում, իսկ ավելի ուշ՝ քեմալականների դեմ ինքնապաշտպանություններում:

3.3 Արևելյան լեգեոնի կազմավորումը: Մեծ Բրիտանիայի և Պ. Նուբարի հետ քաղաքական բանավոր համաձայնություն կայացնելուց անմիջապես հետո Ֆրանսիան ակտիվորեն ձեռնամուխ եղավ լեգեոնի կազմավորման աշխատանքներին: Լ. Ռոմիոն բավական կշռադատված ու ակտիվ գործունեություն ծավալեց: Նա կարողացավ ոչ միայն հայերին համախմբել իր շուրջ, այլ նաև բրիտանացիների հետ սերտ համագործակցություն հաստատել, համաձայնություն կայացնել Կիպրոսում հայկական զորամասի տեղակայման վայրի ու պայմանների շուրջ:

Ֆրանսիացիները բավական կասկածանքով էին վերաբերում եգիպտահայերին համախմբելու հնարավորությանը: Սակայն հայրենիքը ազատագրված տեսնելու գաղափարը կարողացավ համախմբել Եգիպտոսի հայկական կազմակերպություններին: Կամավորագրությանն աջակցելու նպատակով եգիպտահայ բոլոր հասարակական-քաղաքական կառույցները մի կողմ դրեցին հակասություններն ու մեկ կառույցի մեջ համախմբվեցին[90]:

---

[88] Նույն տեղում, էջ 393-397:
[89] Նույն տեղում, էջ 422-424:
[90] Թեքեյան Ծ., նշվ. աշխ., էջ 53-54:

Ամերիկահայերը մեծ խանդավառությամբ լծվեցին Հայկական լեգեոնի կամավորագրությանը, քանի որ հայոց ցեղասպանության լուրերը վրեժի զգացումով էին լցրել տեղի երիտասարդությանը: Նրանց ոգևորում էր Կիլիկիայի ինքնավարության գաղափարը, քանի որ հույսը կորցրել էին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մտքից՝ Ռուսաստանի վարած քաղաքականության հետևանքով: Միավորման գործում վճռորոշ դեր ուներ Պ. Նուբարի գործոնը, ում նկատմամբ մեծ վստահություն կար բոլոր հոսանքների մոտ[91]: Սակայն ֆրանսիական իշխանությունները չկարողացան բոլոր ցանկացողներին տեղափոխել Կիպրոս, և նրանց միայն փոքր մասը համալրեց Հայկական լեգեոնի շարքերը[92]:

Անտանտի երկրների ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորների զգալի մասը հնարավորության դեպքում միանում էր լեգեոնին[93]:

Լեգեոնի կայացման գործում անուրանալի դերակատարություն ունեցան հայազգի սպաները: Ֆրանսիացիները խուսափում էին նրանց տալ բարձր սպայական կոչումներ, նույնիսկ ԱՄՆ-ի և թուրքական բանակի նախկին սպաներին ավելի ցածր կոչումներ էին տալիս: Չնայած դրան՝ հայ սպաները պատրաստակամ էին ծառայելու Հայկական լեգեոնում, որպեսզի կայանար ապագա ինքնավար Կիլիկիայի բանակի միջուկը համարվող զորամասը:

ԳԼՈՒԽՉՈՐՐՈՐԴ: ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

4.1 Լեգեոնի մասնակցությունը ռազմական գործողություններին: Հայկական լեգեոնը բավական երկար ժամանակ ունեցավ մարզումների համար: 1917 թ. կեսերին գեներալ Մ. Բայուն ստուգեց լեգեոնի մարտունակությունն ու կարգապահությունը և գոհ մնաց հայ զինվորներից, իսկ սիրիացիներից՝ դժգոհ[94]:

Պաղեստինյան բանակի մարտունակ զորամասերի զգալի մասը 1918 թ. գարնանը մեկնել էին Եվրոպա, և անհրաժեշտ էր նրանց փոխարեն նոր զորքեր ուղարկել՝ ռազմաճակատը չթուլացնելու նպատակով: Դրանով էր պայմանավորված, որ ֆրանսիական իշխանությունները, չնայած նախապես արած հավաստիացումներին, ստիպված էին փոխել իրենց որոշումը և Արևելյան լեգեոնը տեղափոխել Պաղեստին[95]: Կիլիկիայի ազատագրման ճանապարհը կարող էր բացվել, եթե Պաղեստինում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները ջախջախվեին: Հայկական լեգեոնն իր ներդրումն ունեցավ դաշնակից ուժերի

---

[91] Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 113:

[92] Ճիզմէճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրէզնօ, 1930, էջ 353:

[93] Գուշակեան Թորգոմ պատրիարք, Ամբողջ երկեր, հ. Զ, Հնդկահայք, էջ 31:

[94] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 20-21:

[95] Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 77:

առաջխաղացմանը դեպի Կիլիկիա՝ մասնակցելով Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն և վճռորոշ ճակատամարտին: Այն հայտնի է Մեգիդոյի կամ Արմագեդոնի ճակատամարտ անունով: 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեգիդոյի հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչև Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը դադարեց գոյություն ունենալ: Այսպիսով՝ Մեգիդոյի ճակատամարտի արդյունքում ֆրանսա-բրիտանական ուժերի առջև բացվեց դեպի Լիբանան, Սիրիա և Կիլիկիատանող ճանապարհը:

100 կմ ձգվող ռազմաճակատի մոտ 5,3 կմ երկարությամբ տարածքում՝ Ջավիյա բնակավայրից մինչև Ռաֆաթ-Արարայի բարձունքները կանգնած էր ֆրանսիական զորախումբը, որի կազմում էին հայկական երկու գումարտակները: Հայկական զորամասը գրոհեց Ռաֆաթի բարձունքները՝ Արարայի հարևանությամբ[96]: Ճակատամարտում հայկական զորամասին բաժին էր ընկել լեռնային, լավ ամրացված դժվարամատչելի հատված: Է. Ալենբին թշնամուց երեք անգամ ավելի փոքր ուժեր էր թողել այդտեղ, որոնց խնդիրն էր լինելու առաջինը գնալ հարձակման և շեղել թշնամու ուշադրությունը գլխավոր ուղղությունից: Փաստորեն՝ հայկական զորախմբից պահանջվում էր միայն շեղել թշնամու ուշադրությունը և պահպանել սեփական դիրքերը: Բրիտանացիները չէին հավատում, որ Հայկական լեգեոնն ի վիճակի կլիներ կոտրել թուրքերի պաշտպանությունը՝ ունենալով երեք անգամ քիչ զինվոր, մանավանդ որ նախկինում բրիտանացիները մի քանի անգամ փորձել էին այդ հատվածում առաջ շարժվել ավելի մեծ ուժերով և պարտություն էին կրել: Հայ մարտիկները ցույց տվեցին փայլուն մարտական ունակություններ և համառ մարտերով գրավեցին թուրքական պաշտպանության երեք բնագծերը, և նպաստեցին ընդհանուր հաղթանակին: Ֆրանսիական կողմը, որպեսզի Մերձավոր Արևելքում բրիտանացիների կողքին ցույց տար իր ներկայությունը, ստիպված էր մամուլով փառաբանել Արևելյան լեգեոնի փայլուն հաղթանակը[97]:

4.2 Կիլիկիայի ազատագրումը հայկական և բրիտանական զորքերով: Ռաֆաթ-Արարայի ճակատամարտից հետո լեգեոնը սիրիական անապատներով շարժվեց հյուսիս՝ առանց թշնամու հանդիպելու: Լ. Ռոմիոն այդ ռազմերթն իրականացրեց տեղացիներին ֆրանսիական ուժը ցուցադրելու համար[98]: Արևելյան լեգեոնի երրորդ գումարտակն էր, որ ազատագրեցին Բեյրութը[99]: Հալեպի անկումից հետո թուրքերը ստիպված էին հաշտություն խնդրել: Մինչ այդ բրիտանական ուժերին հաջողվեց գրեթե

---

[96] Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 142-143:
[97] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 374:
[98] Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 20:
[99] Աճէմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 132-138:

ամբողջությամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները[100]:

Լեգեոնը զգալի ներդրում ունեցավ թուրքերի ձեռքում հայտնված հայ կանանց ու աղջիկների ազատման հարցում: Միաժամանակ հայկական կանոնավոր զորամասի ներկայությունը հաղթող դաշնակիցների շարքում մեծ ոգևորություն էր առաջացնում Մեծ եղեռը վերապրածների մեջ[101]:

Գրեթե բոլոր հայ երիտասարդները ցանկանում էին միանալ լեգեոնին և մասնակցել Կիլիկիայի ազատագրմանը: Բեյրութում կամավորագրված 800 հայերից կազմավորվեց լեգեոնի 4-րդ գումարտակը[102]: Սակայն ֆրանսիական ռազմական իշխանությունները հետզհետե փոխեցին քաղաքականությունը Հայկական լեգեոնի նկատմամբ: Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրություն չունենալով՝ վտանգավոր էին համարում հայկական զորամասի մեծացումը[103]: Հետևաբար՝ հրաժարվեցին լեգեոնի մեջ ընդգրկել Բաղդադից, Պոլսից, Դամասկոսից, Հալեպից կամավորագրված հայերին: Նրանց զինվորագրելու դեպքում լեգեոնի գումարտակների թիվը կհասներ 8-ի:

Պ. Նուբարը 1918 թ. հոկտեմբերից բարձրացրեց հայերին պատերազմող կողմ ճանաչելու խնդիրը[104]: Նրա ջանքերը որոշակի արդյունքներ են տալիս: Ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաները սկսում են քննարկել հայերին պատերազմող կողմ ճանաչելու հարցը, իսկ ֆրանսիական դրոշի ներքո մարտնչող Արևելյան լեգեոնը դիտում էին որպես հայկական զորախումբ, որի խնդիրն էր Կիլիկիայի ազատագրումը[105]:

Թուրքերի հետ 1918 թ. հոկտեմբերին Մուդրոսում բրիտանական ռազմական իշխանությունների կնքած զինադադարի պայմանագիրը հիմնականում հակասում էր հայության ձգտումներին: Պատերազմի ավարտական փուլում արդեն իսկ սրվել էին ֆրանս-բրիտանական հակասությունները Մերձավոր Արևելքում: Չնայած նախկինում ստորագրած գաղտնի համաձայնագրերին ու պայմանավորվածություններին՝ բրիտանացիները փորձում էին ֆրանսիային թույլ չտալ ամրապնդվել Մերձավոր Արևելքում, մանավանդ՝ ֆրանսիական ուժեր այնտեղ գրեթե չկային, եթե չհաշվենք Արևելյան լեգեոնը: Ֆրանսիական կողմին չթույլատրվեց մասնակցել Մուդրոսի բանակցություններին[106]: Մուդրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի

---

[100] Gullett H., The Australian Imperial Force, p. 783.
[101] Պոյաճեան Տ., նշվ. աշխ, էջ 164-165:
[102] Ամուրեան Ա., Հայ Դատը, էջ 157:
[103] ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 4:
[104] Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:
[105] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 399:
[106] Fromkin D., A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 2009, pp. 360–373.

վերահսկողության տակ, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը, ինչպես նաև Տավրոսի լեռնահամակարգի թունելների գրավումը[107]:

Նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեգեոնի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից[108]: Զինադադարի 10-րդ և 16-րդ հոդվածները հնարավորություն տվեցին արագորեն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր վերադարձան և նոր կյանք փորձեցին սկսել շուրջ 150-200.000 հայեր: Դա ապացուցում է այն ճշմարտությունը, որ այդ ժամանակաշրջանում, երբ թուրքը ջախջախված և հուսահատ էր, ցանկության դեպքում դաշնակիցները կարող էին թուրքերին ստիպել հեռանալ բոլոր հայկական տարածքներից: Սակայն դա ժամանակին չարվեց, որն էլ հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը:

Հայկական լեգեոնը հասավ իր գլխավոր նպատակին՝ Կիլիկիայի ազատագրմանը: Հայ զինվորն էր, որը թուրքերի դարավոր լծից ազատեց հայրենիքի այդ հատվածը: Լեգեոնականները զգալի ներդրում ունեցան տարագիրներին հայրենիք փոխադրելու, ինչպես նաև հայ բնակչությանը զինելու գործում, որը կարևոր նշանակություն ունեցավ հետագայում քեմալականների դեմ մղված ինքնապաշտպանական մարտերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ բաժնում հանրագումարի են բերվել ատենախոսության հետևյալ առանցքային դրույթներն ու եզրահանգումները.

- Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից հայ հասարակական-քաղաքական շրջանակներն ընտրեցին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավարություն ձեռք բերելու տեսլականը, որն ապագայում պայմաններ կստեղծեր անկախության վերականգնման համար:
- Մինչև 1915 թ. կեսերը ռուսական իշխանությունները չէին բացառում, որոշ դեպքերում նույնիսկ իրենց շահերին համահունչ էին համարում հայկական ինքնավարության ստեղծումը՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ: Սակայն տերությունների միջև գաղտնի համաձայնություններն ու հակասությունները և հատկապես հայոց ցեղասպանության իրականացման հետևանքով արևմտահայկական տարածքների գրեթե ամբողջական հայազրկումն օրակարգից դուրս բերեցին ինքնավար Հայաստանի գաղափարը: Հայաթափված Հայաստանն ու Կիլիկիան այլևս չէին դիտվում որպես հայերի պետական ինքնակազմակերպման տարածք: Նման

[107] Frederick M., The Armistices of 1918, Oxford, 1943, pp. 85-87. Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 537-539:
[108] Bremond E., La Cilicie en 1919-1920, Paris, 1921, p. 6. Պրեմոն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, էջ 10-11:

պայմաններում Ռուսաստանը որդեգրեց Արևմտյան Հայաստանը գրավելու ուղեգիծ, իսկ հայկական ձգտումներն ու շահերը դրվեցին մի կողմ:

• Օսմանյան ժառանգության հարցը լուծելու նպատակով Անտանտի երեք գլխավոր երկրները ստորագրեցին Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Ըստ դրա՝ Արևմտյան Հայաստանի հյուսիսային ու արևելյան տարածքներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ հարավային ու արևմտյան տարածքները և Կիլիկիան՝ Ֆրանսիային: Հայկական տարածքները, փաստորեն, բաժանվելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև: Մեծ տերություններին չէր անհանգստացնում, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը նոր խառնաշփոթի պատճառ կարող էր դառնալ հետպատերազմյան Մերձավոր Արևելքում: Տարբեր պետությունների միջև բաժանվում ու մասնատվում էին հայկական, արաբական, քրդական, ասորական տարածքները: Այդ քաղաքականությունը, որն իր շարունակությունն ունեցավ հետագայում, մինչև այսօր անլուծելի խնդիրներ է առաջացնում այդ տարածաշրջանում:

• 1916-1917 թթ. Կիլիկիան լուրջ կռվախնձոր էր դարձել Իտալիայի ու Ֆրանսիայի միջև: Իտալիան փորձում էր ընդարձակել տիրույթները Միջերկրականի հյուսիսարևելյան ափին: Սակայն Ֆրանսիան չհրաժարվեց Կիլիկիայի նման հարուստ և ռազմավարական առումով կարևոր երկրամասին տիրելու գաղափարից, որի արդյունքում իտալական նկրտումները բավարարում ստացան Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան շրջաններում:

• 1915 թ. աշնանը ռուսական դիվանագիտության կողմից առաջ քաշված Ջեմալ փաշային սեփական կառավարության դեմ ապստամբության դրդելու նախագիծը բավական իրատեսական էր: Սակայն ֆրանսիական և բրիտանական իշխանություններն ավելի ընդարձակ նկրտումներ ունեին Մերձավոր Արևելքում, և Ջեմալի հետ դաշինքը կարող էր դրանց խանգարել: Ահա այդ հանգամանքով էր պայմանավորված այդ բանակցությունների նկատմամբ նրանց սկզբնական վերապահ, ապա նաև բացասական դիրքորոշումը:

• 1917 թ. ռուսական հեղափոխությունների ալիքի վրա բարձրացավ անկախ հայկական պետություն կազմավորելու տեսլականը: Մինչ այդ, եթե չհաշվենք հատուկենտ անհատների առաջարկները, բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունն անիրականանալի երազանք էր թվում: Խորհրդային Ռուսաստանը, ապա նաև ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան կառավարությունները սկսեցին ճանաչել Հայաստանի անկախության հնարավորությունը: Սակայն 1918 թ. սկզբին հայ քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր ընդունելու անկախության հեռանկարը: Անկախություն հռչակելու և սեփական խնդիրներն ինքնուրույն կամ Անտանտի պետությունների աջակցությամբ լուծելու անկարողությունն ի վերջո հանգեցրեց նոր ողբերգության:

• Կիլիկիայում հայկական ապստամբությունը և դաշնակիցների օգնությամբ ազատագրումը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաև՝ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերն ի վիճակի չէին լինի ամբողջ ահավորությամբ իրականացնել Հայոց մեծ եղեռնը: Կիլիկիայում զորքերի ափհանում իրականացնելու և ռազմական գործողություններ ծավալելու նախաձեռնությամբ հանդես են եկել հայկական շրջանակները, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Սակայն Ֆրանսիան ամեն կերպ խոչընդոտում էր հայերի կամ բրիտանացիների միջոցով Կիլիկիան գրավելու բոլոր նախագծերին: Դա պայմանավորված էր նրանով, որ ֆրանսիացիները բավարար զորք չունեին տարածաշրջանում, որպեսզի սեփական ուժերով լուծեին այդ խնդիրը, միաժամանակ հասկանում էին, որ եթե երկրամասն ազատագրվի հայկական կամ բրիտանական ուժերով, ապա պատերազմից հետո իրենց իրավունքների ճանաչումը Կիլիկիայում կլինի բավական բարդ:

• 1915 թ. աշնանից մուսալեռցի քաջամարտիկների ռազմական ունակությունները հայրենի եզերքում կամ Կիլիկիայի որևէ այլ վայրում օգտագործելու գաղափարը լուրջ քննարկումների առիթ էր դարձել ֆրանս-բրիտանական իշխանությունների համար: Այս համատեքստում առաջադրվեցին մուսալեռցիների հիմքի վրա հայկական ավելի մեծ զորամաս կազմավորելու մասին մի քանի նախագծեր:

• Պատերազմում դաշնակիցների հաղթանակից հետո Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները անցնելու էին Ֆրանսիային: Հետևաբար՝ ֆրանսիական իշխանություններին անհրաժեշտ էր Միջերկրականի արևելքում զգալի ուժեր կենտրոնացնել, ավելի ակտիվ քաղաքականություն վարել, սեփական ազդեցությունը տարածել տեղի ժողովուրդների վրա: Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ 1916 թ. Ֆրանսիան ձեռք բերեց Մեծ Բրիտանիայի համաձայնությունը Կիպրոսում հայ կամավորական զորամաս կազմավորելու հարցի շուրջ:

• 1916 թ. հոկտեմբերին Պ. Նուբարի, Մ. Սայքսի և Ժ. Պիկոյի միջև համաձայնություն կայացվեց Կիպրոսում ֆրանսիական դրոշի ներքո կռվող Հայկական լեգեոն կազմավորելու մասին, որի դիմաց Ֆրանսիան պետք է Կիլիկիայինև իրեն անցնող մյուս հայկական տարածքներին պատերազմից հետո ինքնավարություն տար: Հայկական զորաբանակ ստեղծելն աջակցելն արդարացված և ճիշտ քայլ էր: Դա հնարավորություն էր տալու պատերազմից հետո ճանաչվել Անտանտին դաշնակից պատերազմող կողմ և ինքնավարություն պահանջել Կիլիկիայում: Փաստորեն՝ Կիպրոսում հայկական կամավորական զորամաս կազմավորելու

հարցը, որը քննարկվում էր 1914 թ. վերջերից, երկու տարի անց ստացավ իրլուծումը՝ կազմավորվեց Արևելյան լեգեոնը:

• 1916 թ. վերջին ֆրանսիական իշխանությունները Ազգային պատվիրակության նախագահին առաջարկեցին պահանջել միացյալ հայկական պետության ստեղծում իրենց հովանավորության տակ: Դերերը փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Հայ գործիչները տիպված էին համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային: Մեծ տերությունները, եթե պատերազմի թեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված գաղտնի ու հայտնի համաձայնագրերը, ապա բնական էր, որ պատերազմից հետո խաբել էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայ ժողովրդին:

• Ինչպես ցույց տվեց կամավորագրության ընթացքը, հայ երիտասարդությունը ոգևորությամբ էր արձագանքում Կիլիկիան ազատագրելու և թուրքերից վրեժ լուծելու հնարավորությանը: Միաժամանակ պարզ դարձավ, որ համազգային խնդիրների առաջադրման դեպքում հայության բոլոր շերտերը, կառույցները արագորեն համախմբվում էին: Միավորման գործում վճռորոշ դեր ուներ Պ. Նուբարի գործոնը, ում նկատմամբ մեծ վստահություն կար բոլոր հոսանքների մոտ:

• Պաղեստինյան բանակի մարտունակ զորամասերի զգալի մասը 1918 թ. գարնանը մեկնել էին Եվրոպա, և անհրաժեշտ էր նրանց փոխարեն նոր զորքեր ուղարկել՝ ռազմաճակատը չթուլացնելու նպատակով: Դրանով էր պայմանավորված, որ ֆրանսիական իշխանությունները, չնայած նախապես արած հավաստիացումներին, Արևելյան լեգեոնը տեղափոխում են Պաղեստին: Լեգեոնականները խանդավառությամբ ընդունեցին մարտադաշտ մեկնելու լուրը: Նրանք հոգնել էին երկարատև մարզումներից, և շտապում էին հնարավորինս շուտ վրեժ լուծել թուրքերից:

• Կիլիկիայի ազատագրման ճանապարհը կարող էր բացվել, եթե Պաղեստինում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները ջախջախվեին: Հայկական լեգեոնն իր ներդրումն ունեցավ դաշնակից ուժերի առաջխաղացմանը դեպի Կիլիկիա՝ մասնակցելով Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն և վճռորոշ ճակատամարտին: Այն հայտնի է Մեգիդոյի կամ Արմագեդոնի ճակատամարտ անունով: 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած այդ հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչև Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը դադարեց գոյություն ունենալ: Այսպիսով՝ Մեգիդոյի ճակատամարտի արդյունքում բացվեց դեպի Լիբանան, Սիրիա և Կիլիկիա տանող

ճանապարհը: Հալեպի անկումից հետո թուրքերը ստիպված էին հաշտություն խնդրել:

• Ճակատամարտում հայկական զորամասին բաժին էր ընկել լեռնային, լավ ամրացված դժվարամատչելի հատված: Է. Ալենբին թշնամուց երեք անգամ ավելի փոքր ուժեր էր թողել այդտեղ, որոնց խնդիրն էր լինելու առաջինը գնալ հարձակման և շեղել թշնամու ուշադրությունը գլխավոր ուղղությունից: Փաստորեն՝ հայկական զորախմբից պահանջվում էր միայն շեղել թշնամու ուշադրությունը և պահպանել սեփական դիրքերը: Բրիտանացիները չէին հավատում, որ Հայկական լեգեոնն ի վիճակի կլիներ կոտրել թուրքերի պաշտպանությունը՝ ունենալով երեք անգամ քիչ զինվոր, մանավանդ որ նախկինում բրիտանացիները երեք անգամ փորձել էին այդ հատվածում առաջ շարժվել ավելի մեծ ուժերով և պարտություն էին կրել: Հայ մարտիկները ցույց տվեցին փայլուն մարտական ունակություններ և համառ մարտերով գրավեցին թուրքական պաշտպանության երեք բնագծերը, և նպաստեցին ընդհանուր հաղթանակին: Ֆրանսիական կողմը, որպեսզի Արևելքում բրիտանացիների կողքին ցույց տար իր ներկայությունը ստիպված էր մամուլով փառաբանել Արևելյան լեգեոնի փայլուն հաղթանակը:

• Ռաֆաթ-Արարայի մարտերից հետո լեգեոնը սիրիական անապատներով շարժվեց հյուսիս: Արևելյան լեգեոնի երրորդ գումարտակն էր, որ ազատագրեց Բեյրութը:

• Լեգեոնը զգալի ներդրում ունեցավ թուրքերի ձեռքում հայտնված հայ կանանց ու աղջիկների ազատման հարցում: Միաժամանակ հայկական կանոնավոր զորամասի ներկայությունը հաղթող դաշնակիցների շարքում մեծ ոգևորություն էր առաջացնում Մեծ եղեռը վերապրածների մեջ: Գրեթե բոլոր երիտասարդները ցանկանում էին միանալ լեգեոնին և մասնակցել Կիլիկիայի ազատագրմանը: Միայն Բեյրութում կամավորագրված 800 հայերին վերցրին ծառայության, որոնցից կազմավորվեց լեգեոնի 4-րդ գումարտակը: Սակայն ֆրանսիական ռազմական իշխանությունները հետզհետե փոխեցին քաղաքականությունը Հայկական լեգեոնի նկատմամբ: Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրություն չունենալով՝ վտանգավոր էին համարում հայկական զորամասի մեծացումը: Հետևաբար՝ հրաժարվեցին լեգեոնի մեջ ընդգրկել Բաղդադից, Պոլսից, Դամասկոսից, Հալեպից կամավորագրված ավելի քան 3.000 հայերին: Նրանց զինվորագրելու դեպքում լեգեոնի գումարտակների թիվը կհասներ 8-ի:

• Պ. Նուբարը 1918 թ. հոկտեմբերից բարձրացրեց հայերին պատերազմող կողմ ճանաչելու խնդիրը: Ազգային պատվիրակության նախագահի ջանքերը որոշակի արդյունքներ, անշուշտ, տալիս են: Ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաները սկսում են քննարկել հայերին պատերազմող կողմ ճանաչելու հարցը, իսկ ֆրանսիական դրոշի ներքո մարտնչող Արևելյան

լեգեոնը դիտում էին իբրև հայկական զորախումբ, որի խնդիրն էր Կիլիկիայի ազատագրումը:

• Թուրքերի հետ 1918 թ. հոկտեմբերին Մուդրոսում բրիտանական ռազմական իշխանությունների կնքած զինադադարի պայմանագիրը, որը ստորագրվել էր առանց դաշնակիցների շահերը հաշվի առնելու, հիմնականում հակասում էր հայության ձգտումներին: Մուդրոսի զինադադարով՝ Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը: Մուդրոսի պայմանագրից երևացին հայերին խաբելու «դաշնակիցների» քաղաքականության առաջին քայլերը, որոնք ավարտվեցին Լոզանով:

• Նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեգեոնի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից: Զինադադարի 10-րդ և 16-րդ հոդվածները հնարավորություն տվեցին արագորեն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր վերադարձան և նոր կյանք փորձեցին սկսել շուրջ 150-200.000 հայեր: Դա ապացուցում է այն ճշմարտությունը, որ ցանկության դեպքում դաշնակիցները կարող էին նրանց ստիպել հեռանալու բոլոր հայկական տարածքներից: Սակայն դաժամանակին չարվեց, որն էլ հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը:

• Հայկական լեգեոնը հասավ իր գլխավոր նպատակին՝ Կիլիկիայի ազատագրմանը: Հայ զինվորն էր, որը թուրքերի դարավոր լծից ազատեց հայրենիքի այդ հատվածը: Սակայն ֆրանսիական կողմը դրժեց նախկինում տված խոստումները, և այդպես էլ Կիլիկիային ինքնավարություն չտվեց: Հակառակ դրան՝ պետք է արձանագրել, որ լեգեոնի կազմավորումը չափազանց կարևոր դերակատարություն ունեցավ հայոց պատմության և արևմտահայ տեսակի պահպանման հոլովույթում: Նրա պաշտպանության ներքո Կիլիկիա վերադարձավ հայ «մնացորդաց սերունդը», լեգեոնն անուրանալի նշանակություն ունեցավ նաև հետագայում՝ քեմալականների հարձակումների դեմ ինքնապաշտպանություններ կազմակերպելու ժամանակ:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Հայկական լեգեոնի (1916-1920թթ.) կազմավորման պատմությունից, «Պատմություն», Երևան, թիվ 1, 2002, էջ 116-126:
2. Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004, «Զանգակ-97», 264 էջ:
3. Պողոս Նուբարը և Հայկական Հարցի զարգացումները 1912-1921թթ., «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2005, թիվ 1-12, էջ 416-446:
4. Կիլիկիան ազատագրելու ծրագրերը 1915թ., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2006, թիվ 2, էջ 13-21:
5. Կիլիկիայի ուղղությամբ գործող հայկական զորամաս կազմավորելու ծրագրերը 1914-1916 թթ., «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2007, թիվ 3 (16), էջ 17-23:
6. Ռուսաստանը և Կիլիկիայի հարցը 1914-1916 թթ., «Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր», Երևան, 2008, թիվ 1-2 (7-8), էջ 23-29:
7. Հայկական լեգեոնը Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին», 2009, թիվ 4, էջ 55-67:
8. Հայոց ցեղասպանությունը կանխելու Անտանտի հնարավորությունը, «Էջմիածին», 2010, թիվ 8, էջ 39-49:
9. Մարկ Սայքսը և Հայկական լեգեոնի կազմավորումը, «Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր», Երևան, 2011, թիվ 1, էջ 11-18:
10. Մարկ Սայքսի դիրքորոշումը հայերի և Հայկական հարցի վերաբերյալ, «Հայ կազեան հայագիտական հանդես», Բեյրութ, 2012, թիվ 1, էջ 55-80:
11. Մեծ Բրիտանիան և Կիլիկիայի ազատագրման հարցը Առաջին աշխարհամարտի տարիներին, «Լրատու: Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2012, թիվ 2, էջ 109-119:
12. Գևորգ Ե կաթողիկոսի և Պողոս Նուբարի նամակագրությունը, «Էջմիածին», 2013, թիվ 4, էջ 45-59:
13. Արևելյան լեգեոնի տեղափոխումը Պաղեստինյան ռազմաճակատ, «Լրատու: Գիտական հոդվածների ժողովածու», Ստեփանակերտ, 2013, թիվ 2, էջ 77-85:
14. Մուսալեռցիներին զինվորագրելու ֆրանս-բրիտանական ծրագրերը (1916 թ.), «Պատմաբանասիրական հանդես», 2013, թիվ 3, էջ 44-61:
15. Հայկական լեգեոնի տեղակայումը Կիպրոսում, «Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր», Երևան, 2013, թիվ 2 (19), էջ 45-52:

16. Ստեփան Սապահ-Գյուլյանի մասնակցությունը Հայկական լեգեոնի կազմավորման գործընթացին, «ԱրՊՀ Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2013, թիվ 1, էջ 142-151:
17. Հայկական լեգէոնի մուտքը Լիբանան եւ Կիլիկիա (1918), «Բազմավէպ», Վենետիկ, 2013, ՃՀԱ տարի, թիւ 3-4, էջ 211-234:
18. Կիլիկիայի համար առաջացած ֆրանս-իտալական հակասությունները Առաջին աշխարհամարտի տարիներին, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու», Երևան, 2014, էջ 138-143:
19. Կիլիկիայի հայերի տարագրությունը և այն կանխելու նախագծերը Առաջին աշխարհամարտի տարիներին, «Պայման» պատմամշակութային հանդես (պարսկ.), Թեհրան, 2014, թիվ 6, էջ 57-68:
20. Կիլիկիան հայ գործիչների ծրագրերում Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին», 2014, թիվ 8, էջ 99-126:
21. Մեգիդոյի ճակատամարտը և Հայկական լեգեոնը: Թուրքական բանակի ջախջախումը Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում 1918 թ. աշնանը, «ՎԷմ», 2014, թիվ 3, էջ 135-157:
22. Կիլիկիան գրավելու և Ջեմալ փաշայի հետ բանակցությունների խնդիրը Անտանտի նախագծերում (1915 թ. երկրորդ կես), «Հայագիտության հարցեր», թիվ 3, Երևան, 2014, էջ 92-104:
23. Մուսալեռցիները ֆրանս-բրիտանական ծրագրերում 1915 թ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, թիվ 3, էջ 47-57:
24. Մուսալեռցիների կամավորագրումը Արևելյան լեգեոնին, «Հայոց պատմության հարցեր», 2014, թիվ 15, էջ 134-147:
25. Ֆրանսիայի հավակնությունները Կիլիկիայում Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին», 2015, թիվ 1, էջ 70-91:
26. Արևելյան լեգեոնի հայ սպաներն ու հոգևորականները, «Հայագիտական հանդես», Երևան, 2015, թիվ 1, էջ 103-116:
27. Կիլիկիահայության տեղահանությունը Հայոց ցեղասպանության ժամանակ, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու», Երևան, 2015, էջ 173-179:
28. Մուսալեռցիներին իր քաղաքական և մշակութային ազդեցությանը ենթարկելու Ֆրանսիայի քաղաքականությունը, «Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր», Երևան, 2015, թիվ 1 (23), էջ 47-57:
29. Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցը ռուսական դիվանագիտության 1914-1915 թթ. գաղտնի ծրագրերում, «ՎԷմ», Երևան, 2015, թիւ 2 (50), էջ 59-77:

30. Հայկական զինուժի դերը Պաղեստինյան ռազմաճակատում 1918 թ., «Էջմիածին», 2015, թիվ 7, էջ 102-117:
31. The Entente States' ambitions in Cilicia during First World War, "Conference Proceedings of 2nd International multidisciplinary scientific conference on social sciences & arts SGEM 2015", Book 3 (Anthropology, archaeology, history and philosophy), Sofia, 2015, pp. 471-477.
32. Սայքս-Պիկո-Նուբար համաձայնության պայմանների փոփոխումը Ֆրանսիայի կողմից, «Պատմություն և հասարակագիտություն տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 1, Երևան, 2015, էջ 172-187:
33. Բրիտանական դիվանագետների արձագանքը Հայոց ցեղասպանությունը կեղծելու թուրքական քաղաքականությանը (1915-1922 թթ.), «Հայագիտական ուսումնասիրություններ (գիտական հոդվածների պարբերական ժողովածու)», թիվ 6, Ստեփանակերտ, 2015, էջ 55-62:
34. Մուդրոսի զինադադարը և Հայկական հարցը, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու», Երևան, 2016, էջ 176-182:
35. Իտալիայի հավակնությունները Կիլիկիայի նկատմամբ Առաջին աշխարհամարտի տարիներին, «Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր», Երևան, 2016, թիվ 1-2 (25-26), էջ 35-43:
36. Միացյալ Հայաստանի խնդիրը 1917-1918 թթ., «Պատմություն և հասարակագիտություն տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 2, Երևան, 2016, էջ 8-23:

ПОГОСЯН САМВЕЛ АНДРАНИКОВИЧ

КИЛИКИЯ В ПЛАНАХ АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ КРУГОВ И ГОСУДАРСТВ АНТАНТЫ (1914-1918)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 27-го сентября, 2016 г. в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Во время Первой мировой войны армянские политические круги и государства Антанты были заинтересованы Киликией, которая располагалась на северо-восточном побережье Средиземного моря. Изучение этого вопроса является чрезвычайно важным, поскольку позволяет нам понять готовность великих держав выполнить обещания, соглашения и обязательства перед союзниками. Тема позволяет понять конфликт интересов между странами, а также в рамках различных ведомств и государственных деятелей. Материал также связан с геноцидом армян, возможностью предотвращения его. В 21-м веке мы наблюдаем в Сирии, Ираке, геноцидные действия против различных малых этнических и религиозных групп и реакцию «цивилизованного» мира. Трагедии прошлого века, недостаточно встряхнули человечество, чтобы создать четкие механизмы для предотвращения подобных массовых преступлений. Поэтому изучение этой проблемы может сделать предсказуемой политику держав в нашем регионе, и это позволяет сделать попытки найти новые решения.

Основной целью работы является проведение тщательной исследования и выяснение военно-политической ситуации и дипломатической борьбы Киликии в 1914-1918. Это был период, когда чаяния и планы, амбиции и аппетиты были скорректированы победами и поражениями армий на разных фронтах, революциями и участием в войне новых государств.

Впервые, на основе изучения архивных материалов и сборников документов представлены переговоры и проекты по освобождению Киликии войсками армян или Антанты, проблемы и цели, связанные с ним на разных этапах войны. Представлены различные точки зрения и противоречия армянских общественно-политических кругов и различных государственных деятелей великих держав и ведомств о будущем Киликии.

В диссертации представлены предложения государственных и военных деятелей Великобритании, Франции и России об освобождении Киликии с помощью британских, французских, армянских, японских войск, и дискуссии по этому поводу политическими и военными властями этих стран. Проанализированы возможности реализации этих проектов и их последствия.

Освещена негативная роль Франции, которая заблокировала возможности освобождения Киликии. Это было связано с тем, что она хотела обладать Киликией, но не имела достаточного количества войск, чтобы действовать на Ближнем Востоке. Французы опасались, что если Киликия будет освобождена

армянскими или британскими войсками, то они в состоянии не были бы получить провинцию после войны. В историографии большое внимание было уделено героической самообороне мусадагских армян, но их дальнейшие шаги и инициативы по освобождению отечества остались почти неизвестными. Впервые с научной точки зрения выяснены и проанализированы их предложения, военная подготовка, франко-британские проекты, связанные с ними. Инициатива формирования Армянского легиона представлена в полной картине переговоров и в процессе консенсуса решений, поправки сделаны на прежде принятых точках зрения.

О битве при Арара было много написано в армянской историографии, но не было представлено, что это был только один эпизод в битве при Мегиддо или Армагеддон, который состоялся 19-25 сентября 1918 года. Поскольку в армянской историографии до сих пор не были сделаны серьезные научные исследования о военных действиях на палестинском фронте и об истории армянского легиона, это стало причиной того, что через столетия, в армянском обществе нет правильного представления о битве при Мегиддо и о реальной роли армянского легиона в ней. Впервые в арменоведении подробно описана крупномасштабная операция палестинского фронта, в результате которой турецкий фронт рухнул. Освещена реальная роль армянского подразделения, его расположение, а также стремление французских властей восхвалять победу легиона для усиления французского влияния в регионе. Путь Армянского легиона после битвы при Мегиддо до Киликии был исследован и уточнен. В армянской историографии по этому вопросу также были выдвинуты неправильные точки зрения.

Последствия Мудросского перемирии для Киликии и для решения Армянского вопроса были проанализированы. Благодаря этому соглашению, Киликия была освобождена от турок без боя. Но Западная Армения по Мудросскому перемирию была оставлена под контролем турок, турецкие войска не были полностью разоружены, что привело к дальнейшему провалу Армянского вопроса.

Особое внимание было уделено освобождению Киликии силами легиона, а также действия легионеров в поддержку армянских беженцев, по освобождению женщин и детей от рук мусульман. Представлены стремления молодых беженцев присоединиться к армянской воинской части, с целью освобождения родины. Но французское правительство не позволило увеличить количество солдат в Армянском легионе. Это было связано с тем, что Франция не хотела дать автономию Киликии, как она обещала, поэтому она считала увеличение Армянской армии опасной.

POGHOSYAN SAMVEL ANDRANIK

CILICIA IN THE PLANS OF THE ARMENIAN SOCIAL-POLITICAL CIRCLES AND ENTENTE STATES (1914-1918)

Dissertation for the degree of Doctor of Sciences (History), on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on the 27th of September, 2016, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

During the First World War, the Armenian political circles and Entente states were interested in Cilicia, which is situated on the northeastern coast of the Mediterranean. The study of this issue is extremely important because it allows us to understand the willingness of the great powers to comply with promises, agreements, and obligations to their allies. This topic facilitates an understanding of conflicts of interest between countries, as well as within different agencies and statesmen. The material is also related to the Armenian Genocide and the possibility of preventing it.

In the 21st century, we see genocidal actions against different small ethnic and religious groups in Syria and Iraq and the response of the "civilized" world. The tragedies of the past century have not sobered up humanity enough to create clear mechanisms to prevent such mass crimes. Therefore, a study of the problem can help predict the policies of the Great Powers in our region, and it may enable us to try to find new solutions.

The main aim of the thesis is to thoroughly investigate and elucidate the military-political situation and diplomatic struggle over Cilicia in 1914-1918. This was a period when aspirations and plans, ambitions and appetites were adjusted based on the victories and defeats of the armies on different fronts, revolutions and the entry into the war of new states.

Based on a study of archival material and collections of documents, the negotiations and projects for the liberation of Cilicia by Armenian or Entente forces have been presented for the first time, along with the challenges and objectives related to the various stages of the war. The different viewpoints and contradictions of Armenian social and political circles as well as of various government officials and agencies of the great powers about the future of Cilicia have been presented.

The offers of state and military officials of Great Britain, France, and Russia for the liberation of Cilicia with the help of British, French, Armenian, and Japanese troops are presented in this dissertation. It also touches on the discussions of the subject by the political and military authorities of these countries. Additionally, it analyzes the possibilities and the consequences of the realization of these projects.

It also highlights the negative role played by France, which blocked the options for the liberation of Cilicia. This was due to the fact that France wanted to claim Cilicia, but did not have enough troops to operate in the Middle East. The French feared that if Cilicia were liberated by Armenian or British troops, then they would not be able to claim the province after the war.

In historiography, great attention was paid to the heroic self-defense of Musa Dagh, but the steps and initiatives that followed towards liberating their native land has remained almost unknown. A scientific coverage and analysis of the related proposals, military training, and the Franco-British projects connected with them have been done for the first time.

The initiative to form the Armenian Legion presented a complete picture of the process of negotiation and consensus decisions; corrections have been made of previously accepted viewpoints.

A lot has been written about the Battle of Arara in Armenian historiography, but it has never been mentioned that it was only one episode in the battle of Megiddo or Armageddon which took place on September 19-25, 1918. No serious scientific study has been conducted in Armenian historiography on the military actions on the Palestinian front and the history of the Armenian Legion; this is the reason why, after a century from the events, the Battle of Megiddo and real role of the Armenian Legion in it still have not been highlighted in Armenian society. The large-scale operation on the Palestinian front, as a result of which the Turkish front was crushed, has been described in detail for the first time in Armenian Studies. The real role of the Armenian unit, its position, as well as the desire of the French authorities to glorify the victory of the Legion for increasing French influence in the region have been highlighted.

The path taken by the Armenian Legion after the Battle of Megiddo to Cilicia have been investigated and corrected. Wrong viewpoints about this have also been propounded in Armenian historiography.

The consequences of the Armistice of Mudros for Cilicia and for solving the Armenian Question have been analyzed. Following this agreement, Cilicia was liberated from the Turks without a fight. But while the Armistice of Mudros kept Western Armenia under the control of the Turks, the Turkish armies were not completely disarmed, which led to a further failure of the Armenian Question.

Special attention was paid to the liberation of Cilicia by the Legion, as well as the actions of the legionnaires in supporting the Armenian refugees, liberating women and children from Muslims. The aspirations have been presented of young refugees to join the Armenian military unit with the aim of liberating their homeland. But the French government did not allow an increase in the number of soldiers in the Armenian Legion. This was due to the fact that France did not want to give autonomy to Cilicia as it had promised and therefore considered increasing the Armenian army dangerous.